

**Վճռաբեկ դատարանի պրակտիկական քրեական գործերով**  
(ընդգրկում է 01/01/07 – 01/07/09 ժամանակահատվածը)

***Ներածություն***

**ՀՀ Վճռաբեկ դատարանի կարգավիճակը, Վճռաբեկ դատարանի քրեական գործերով կայացված դատական ակտերի մոնիթորինգի ծրագրի անհրաժեշտությունը և իրականացման մեթոդոլոգիան**

ՀՀ Սահմանադրության նոր 2005թ. խմբագրությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը ստացավ նոր՝ ընդհանուր իրավասության դատարանների բարձրագույն դատարանի կարգավիճակ, որը պայմանավորված էր ՀՀ նախադեպային իրավունքի համակարգին անցնելու պայմաններում նրա վրա դրված նոր առաքելությամբ:

ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը»:

Այնուհետև, նույն տեղում նշվում է, որ «Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:

Վճռաբեկ դատարանի նոր կարգավիճակի ուժով նրա գործունեության լուսաբանումը և հետազոտումը հասարակական մեծ պահանջարկ է առաջացնում: Ըստ էության, այդ պահանջարկը գրեթե նույնն է, ինչ որ հասարակության՝ երկրի օրենսդրությանը և դրանում մտցվող փոփոխություններին ծանոթանալու պահանջը: Սահմանադրական այս նորամուծությամբ, փաստորեն ամրագրվեց Վճռաբեկ դատարանի՝ «ինչ է ասում օրենքը» գործառույթի սահմանադրական կարգավիճակը, որի իրացման արդյունքը՝ որոշումների և դրանց մեկնաբանությունների տեսքով պարտավոր են դառնում ՀՀ մյուս բոլոր դատարանների համար:

Հենց հասարակական այս պահանջի բավարարման նպատակով նախաձեռնվեց ՀՀ Վճռաբեկ դատարանի 01/01/07 – 01/07/09 ժամանակահատվածի դատական պրակտիկայի մոնիթորինգի ծրագիրը: Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս ուսումնասիրության ոլորտում ընդգրկվել են միայն քրեական գործերով կայացված որոշումները: Հուսով ենք, որ ծրագիրը կլինի շարունակական՝ ընդգրկելով նաև քաղաքացիական և վարչական գործերով ՀՀ բարձրագույն դատական ատյանի պրակտիկան, որը պակաս կարևոր չէ հանրությանը դատական իշխանության գործունեության մասին օբյեկտիվ վերլուծությունների հիման վրա համարժեք և ներկայացուցչական տեղեկատվություն հաղորդելու տեսանկյունից:

Մոնիթորինգի ընթացքում ուսումնասիրվել են ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից 2007թ. հունվարի 1-ից մինչև 2009թ. հուլիսի 1-ը քրեական գործերով կայացված

հրապարակված բոլոր որոշումները (թվով 136), ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վարույթ չընդունելու և վերադարձնելու մասին որոշումներ (թվով 150), ինչպես նաև՝ հենց այդ բողոքները՝ ներկայացված փաստաբանների կողմից:

Ուսումնասիրության հեղինակները աշխատել են որքան հնարավոր է օբյեկտիվ ներկայացնել խնդրո առարկան, մատնանշելով ինչպես դրական կողմերը՝ ի դեմս Վճռաբեկ դատարանի կողմից հաստատուն կայացած պրակտիկայի դրսևորումների՝ կոնկրետ իրավական հարցերով, այնպես էլ այն դեպքերը, երբ Վճռաբեկ դատարանը, ըստ էության սահմանելով դատական նորույթ, նոր մեկնաբանություն, այնուհետև չի հետևում դրա՝ ավանդույթ դառնալու գործընթացին, չի երաշխավորում այն: Ստացվում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից ընդունված մեկնաբանությանը հակասող պրակտիկա է ձևավորվում մինչդատական վարույթ իրականացնող մարմինների և դատարանների կողմից, այդ պրակտիկայի մասին ահազանգում են պաշտպաններն իրենց վճռաբեկ բողոքներում՝ վկայակոչելով Վճռաբեկ դատարանի առկա նախադեպը, սակայն Վճռաբեկ դատարանը այդ բողոքները թողնում է առանց քննության:

## **1. Ապացույցների հետ կապված Վճռաբեկ դատարանի պրակտիկան**

### **1.1. ՎԴ պրակտիկան կապված գործով վճռորոշ նշանակություն ունեցող և օբյեկտիվ ապացույցներով չհաստատված գործով շահագրգռված անձի ցուցմունքը մեղադրական դատավճռի հիմքում դնելու հետ**

Թիվ ՎՔ-203/05 գործով Վճռաբեկ դատարանը 27/07/2005թ. որոշմամբ բավարարել էր դատապարտյալի բողոքը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 20.06.2005թ. որոշման դեմ, որով վերաքննիչ դատարանը բեկանել էր առաջին ատյանի դատարանի մեղադրական դատավճիռը: Դատավճռով հաստատված էր համարվել, որ ամբաստանյալը խարդախությամբ վերցրել էր ԱՄՆ 80 դոլար գումար իր պաշտոնեական լիազորությունների շրջանակից դուրս գտվող գործողություններ կատարելու համար, ինչի հիմքում դրվել էին բացառապես տուժողի ցուցմունքները և դրանցից ածանցյալ այլ անձանց ցուցմունքները: Վերաքննիչ բողոքում ամբաստանյալը խնդրել էր արդարացնել իրեն հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Վերաքննիչ դատարանը բեկանել էր դատավճիռը և գործը կարճել չարդարացնող, այն է՝ իրադրության փոփոխության հիմքով, որպիսին համարվել էր դատապարտյալի հաշմանդամություն ձեռք բերելու և հանրության համար վտանգավոր լինելուց դադարելու փաստը: Վճռաբեկ դատարանը, համաձայնելով բողոքաբերի փաստարկների հետ, նշել էր, որ դատապարտյալը՝

*«թե նախաքննության, և թե դատական քննության ժամանակ ժխտել է Ա.Ս.-ից որևէ գումար պահանջելու կամ վերցնելու հանգամանքը և պնդել, որ վերջինիս ցուցմունքները իրականությանը չեն համապատասխանում: Ս.Բ.-ին առաջադրված մեղադրանքը հիմնված է միայն գործի ելքով շահագրգռված և սույն գործով տուժող ճանաչված Ա.Ս.-ի ցուցմունքների վրա: Իսկ հարցաքննված*

անձինք հայտնել են, որ Մ.Բ.-ի կողմից խարդախությամբ 80 ԱՄՆ դոլար վերցնելու մասին իրենք իմացել են հենց Ա.Ս.-ից: Այս պայմաններում, երբ Ա.Ս.-ի ցուցմունքները հաստատող օբյեկտիվ տվյալները բացակայում են, հնարավոր չէ ապացուցված համարել, որ Մ.Բ.-ին մեղսագրված արարքը տեղի է ունեցել: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի էլքով շահագրգռված անձի ցուցմունքները, առանց դրանք հաստատող օբյեկտիվ ապացույցների առկայության, բավարար չեն հանգելու այն համոզման, որ հանցագործության դեպքը տեղի է ունեցել<sup>1</sup>, հետևաբար ՀՀ քր.դատ.օր 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն Մ.Բ.-ի նկատմամբ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման» (հավելված 1, էջ 6, պարբ. 2):

Այս նախադեպային դիրքորոշումը շատ փաստաբանների համար ուղեցույց հանդիսացավ՝ իրենց բողոքները ՀՀ վճռաբեկ դատարան ներկայացնելիս: Ստորև, հարցի կարևորությանն հարիր մանրամասնությամբ, ներկայացնում ենք այն գործերը, որոնցում այն վկայակոչվել է՝ փաստարկելով, որ նմանատիպ դիրքորոշում պետք է ցուցաբերվի նաև նույն իրավական հարցի լուծումը պահանջող իրենց գործերով ևս:

**ԳՈՐԾ 1.** Առաջին ատյանի դատարանը 19.01.2007թ. անձին դատապարտել է ՀՀ քր.օր. 117-րդ հոդվածով և նշանակել տուգանք 50.000 դրամի չափով: Վերաքննիչ դատարանը 28.02.2007թ. դատավճիռը թողել է անփոփոխ: Դատավճռի հիմքում դրվել էին տուժողի ցուցմունքներն այն մասին, որ ամբաստանյալը դեպքի օրը՝ 2006թ. օգոստոսի 16-ին, ժամը 22.00-ից մինչև 22.15-ն ընկած ժամանակահատվածում էսենցիա է լցնելիս եղել իր դռան շեմին, իրեն տեսնելուն պես շարտել իր դեմքին, ինչը արդյունքն է եղել նրանց միջև երկար պատմություն ունեցող թշնամական հարաբերությունների: Գործում եղած այլ ապացույցներ են հանդիսացել՝

- ամբաստանյալի՝ իր մեղքը ժխտող ցուցմունքները, որ՝ ա/ տուժողը կտուրում կառուցել է ապօրինի քարաշեն կառույց, որից վնասվել է ամբաստանյալի բնակարանի առաստաղը և տանիքը, պատճառվել նյութական վնաս; բ/ քաղաքապետարանից ի պատասխան իր բողոքների ստացվել է պաշտոնական գրություն այն մասին, որ տուժողին պարտավորեցվել է «ձեռնպահ մնալ հետագա շինարարական աշխատանքներ կատարելուց», որի կապակցությամբ՝ գ/տուժողը սպառնացել է դատի տալ ամբաստանյալին, որի արդյունքում և ծնվել է սույն քրեական գործը; դ/ ինքը իրեն մեղսագրվող արարքը չի կատարել և նշված օրը և ժամին իր և տուժողի միջև վիճաբանություն տեղի չի ունեցել.
- վկայի՝ ամբաստանյալի և տուժողի հետ նույն հարթակի հարևանի ցուցմունքը, որ դեպքի օրը, ժամը 21.-ից մինչև ուշ գիշեր իր բնակարանի դուռը շոգի պատճառով կիսաբաց է եղել, ժամը 22.00-ի սահմաններում որևէ վեճ աղմուկ, օգնության ձայն չի լսել, քացախաթթվի հոտ չի զգացել.
- վկայի՝ մեկ հարկ ներքև բնակվող հարևանի նույնաբովանդակ ցուցմունքներով, որ բացի այդ, նա նույն օրը ունեցել է հյուրեր, որոնք աղմուկի դեպքում կլսեին մի բան և օգնություն ցույց կտային հարկ եղած դեպքում.

<sup>1</sup> Ընդծումը մերն է:

- վկայի՝ ամբաստանյալի ընկերուհու ցուցմունքն այն մասին, որ նա այդ ժամին սուրճ է խմել ամբաստանյալի հետ, այդ ընթացքում՝ 22.20-ից մինչև 23.00-ն որևէ աղմուկ չի լսել և դուրս գալուց աստիճանավանդակը թաց չի տեսել.
- վկայի՝ տեղամասային տեսուչի ցուցմունքն այն մասին, որ ճանաչում է տուժողին և ամբաստանյալին, տեղյակ է նրանց լարված հարաբերությունների մասին, բայց տուժողը երբեք իրեն չի ասել, որ ամբաստանյալը (ինչպես պնդում էր տուժողը) տարբեր նյութեր է լցրել տուժողի դռան շեմին.
- Նախաքննության ընթացքում կատարվել են դատա-հետքաբանական և դատա-քիմիական, ինչպես նաև դատա-բժշկական փորձաքննություններ, որոնք դատարանների կողմից չեն գնահատվել: Մինչդեռ առաջին երկու փորձաքննությունները արձանագրել են տուժողի շեմի սրբիչի վրա ժավելի նյութի առկայություն, իսկ երրորդ փորձաքննությամբ, որով հաստատվել է տուժողի դեմքին էսենցիայի հետքերի առկայությունը, չի հաստատվել այն, որ դա եղել է ամբաստանյալի գործողությունների հետևանքով, բացի այդ, փորձագետը անտեսել է գործում առկա տեղեկանքն այն մասին, որ տուժողը այրվածքներ է ստացել նաև ձեռքի շրջանում, ինչի մասին չի ասել երբեք նաև ինքը տուժողը: Պաշտպանության կողմը պնդում էր, որ բացառված չէ, որ տուժողն ինքը պատճառած լիներ իրեն այդ վնասվածքները, ինչն հիմնավորելու համար բերում է ստորև շարադրվող փաստերը.
- ա/ Առողջապահության նախարարությունից ստացված հիվանդության պատմության քաղվածքից բերված այն տեղեկանքը, որ տուժողն ունի «դիէնցեֆալ սինդրոմ» ախտորոշումը, «դյուրագրգիռ է, դյուրաբորբոք, հագնվում է եղանակին ու տարիքին անհամապատասխան, հուզմունքային անկայուն կին է, տառապում է ֆիզիկական և հոգեկան ուժերի գերլարումից» (**հավելված 2, էջ 6, պարբ. 2**), իսկ բ/«Պրակտիկ բժշկի գիրք» աշխատության մեջ տրված պարզաբանման համաձայն «դիէնցեֆալ սինդրոմ ախտորոշմամբ տառապող հիվանդները ունեն հոգե-վեգետատիվ խանգարումներ, այսինքն, նրանք միշտ լարված են, ագրեսիվ, և կարող են նույնիսկ իրենք իրենց վնասել» (նույն տեղում), և գ/ տուժողի ցուցմունքներն այն մասին, որ ամբաստանյալը «իր բնակարանի շորի տակ կարիճներ է դնում, ուզում է իրեն թունավորել, և որ նրան սատանաներ են հետապնդում» (**հավելված 2, էջ 6, պարբ. 3**): Ավանի հոգեբուժական կլինիկական բժշկական գաղտնիքի հիմքով մերժել է տրամադրել համապատասխան տեղեկություններ տուժողի վերաբերյալ, իսկ դատարանը մերժել է բժշկական հիմնարկին այդ տեղեկությունները տրամադրելուն պարտավորեցնելու մասին պաշտպանի միջնորդությունը: Բացի այդ, վարույթ իրականացնող մարմինները չեն ստուգել վերը ներկայացված վկաների ցուցմունքների արժանահավատությունը՝ աղմուկի լսելի լինելը և այլն.
- հակասական ցուցմունքները տուժողի և իր կողմից հրավիրված վկաների ցուցմունքների միջև, մասնավորապես՝
  - տուժողը նախ պնդել է, որ «մեր միջև վիճաբանություն կամ աղմուկ տեղի չի ունեցել, այլ միայն ես լաց եղա նրա արարքից հետո, այդ ամենը տևեց 1-2 րոպե», այնուհետև, որ՝ «ինքը միջանցքում ճչում էր, որ հարևանները զան օգնության, բայց ոչ ոք օգնության չի եկել, և ինքը վարորդի հետ գնացել է ոստիկանություն» (**հավելված 2, էջ 5, պարբ. 4 և 5**).

- տուժողի վարորդը նախ պնդել է, որ տուժողին դեպքի օրը ժամը 22.30-ին բերել է տուն, հետո գնացել իր տուն, սակայն տուն չհասած, տուժողը զանգահարել և հետ է կանչել իրեն, սակայն (հավելված 2, էջ 5, պարբ. 9), մինչդեռ դեպքը տեղի է ունեցել 22.15-ի սահմաններում; տուժողի եղբոր կինը և նրա դուստրը հայտնել են, որ 22-00-ին ինչպես միշտ վարորդը տարել է քասախից Երևան, իսկ վարորդն էլ հայտնել է, որ խոչընդոտների բացակայության դեպքում, մեքենան հասնում է 20-25 րոպեում, սակայն այնուհետև նույն վարորդը ցուցմունք է տվել այն մասին, որ ճանապարհը տուժողի տանից մինչև իր տուն տևում է 5 րոպե, իսկ եթե այդպես է, ապա ճանապարհին հետ գնալուց զանգ ստանալը կարող էր լինել դեպքից 2-3 րոպե հետո, մինչդեռ ըստ հեռախոսազանգերի վերծանման տուժողը վարորդին զանգել է 22.57-ին; բացի այդ նույն վարորդը հետագայում հայտնել է, որ տուժողը «զանգեց, երբ ես արդեն տանն էի, սուրճ խմելը դեռ չէի ավարտել, և կրկին հետ կանչեց» (հավելված 2, էջ 5, պարբ. 11):

Այս գործով նախադեպային դիրքորոշում էր ակնկալվում հետևյալ հարցի կապակցությամբ, թե՛ արդյոք կարելի է գործի ելքով շահագրգռված, մեղադրյալի նկատմամբ թշնամանք ունեցող վկայի/տուժողի ցուցմունքը դնել մեղադրական դատավճռի հիմքում, և արդյոք համակցություն են կազմում այն, թեկուզ և թույլատրելի ապացույցները, երբ վերջիններս արտացոլում են ոչ թե հանցագործության դեպքը, այլ այդ մասին հիմնական տուժողի դեպքի վերարտադրության արտացոլումը, այսինքն՝ հանդիսանում են ածանցյալ, այլ ոչ թե ինքնուրույն ապացույց: Ներկայացված գործով առկա էր վկայի անարժանահավատության մասին երկու հիմնական փաստարկ՝ անատողջ և թշնամաբար տրամադրված լինելը, բացի այդ, դատա-բժշկական փորձաքննության եզրակացությունը թեև հաստատում էր քացախաթթվի առկայությունը, սակայն չէր բացառում ամբաստանյալի՝ տուժողի ինքնավնասման վարկածը, որը չէր ստուգվել գործով:

Վերադարձնելով բողոքը, Վճռաբեկ դատարանը 13.06.2007թ. որոշման մեջ նշել է,

*«ներկայացված բողոքում չկան հիմքեր եզրահանգելու, որ սույն գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և որ ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ»* (հավելված 3, էջ 1, պարբ. 1):

Այսպիսով, վճռաբեկ դատարանը ընդհանրապես չի անդրադարձել փաստական հանգամանքների նմանությանը, հետևաբար և իր իսկ կողմից նախկինում Ս.Բ.-ի գործով կայացված որոշման պարտադիր լինելու խնդրին, մասնավորապես՝ կապված գործով շահագրգռված անձի ցուցմունքների դատապարտման համար վճռորոշ նշանակություն ունենալու իրավունքի հարցի հետ:

1.2. ԳՈՐԾ 2. Վկայակոչվում են ինչպես նշված նախադեպը, այնպես էլ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի՝ խոշտանգումների արգելքի, 6-րդ հոդվածի 3-րդ մասի դ/ կետի՝ անձի դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու իրավունքի խախտումները, որոնց հետ կապված Վճռաբեկ դատարանը նշել է, որ իր կողմից կայացվելիք դատական որոշումը չէր կարող էական նշանակություն ունենալ դատական պրակտիկայի միասնականության ապահովման համար և որ պնդվող դատական սխալը չի կարող առաջացնել ծանր հետևանքներ:

Առաջին ատյանի դատարանը 13.08.2008թ. անձին դատապարտել է ՀՀ քր.օր. 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով և նշանակել ազատազրկում 10 տարի ժամանակով: Վերաքննիչ դատարանը 29.01.2009թ. դատավճիռը թողել է անփոփոխ: Դատավճռի հիմքում դրվել էին տուժողի որդու, գործով տուժող Ա.Վ.-ի ցուցմունքներն այն մասին, որ իր հորը քարով հարվածել և սպանել է ամբաստանյալը, որպիսի ցուցմունքները պնդել էին Ա.Վ.-ի մայրը և եղբայրը: Գործում եղած ապացույցներ են հանդիսացել՝

- ամբաստանյալի՝ Ս.Ն.-ի տուժողին սպանելու իր մեղքը ժխտող ցուցմունքները; ամբաստանյալը սկիզբից ընդունել է, որ իր նետած քարից մարդ է մահացել, բայց երբ «կալանքի սանկցիայից հետո, ոստիկանության միջանցքում տեսել է ճակատը բինտով կապած Վահագին, իրեն ուղեկցող ոստիկանին՝ Արամին ասել է. «բա ասում էիք մահացել է, ես նրան եմ քարով խփել» (հավելված 4, էջ 4, պարբ. 4), ինչից հետո, տեղեկանալով, որ սպանվածը Վահագի հայրն է եղել, սկսում է ժխտել իր մեղքը: Դրանից հետո, ըստ պաշտպանության կողմի, ամբաստանյալի նկատմամբ սկսվում են կիրառվել խոշտանգումներ. գործի նյութերով հիմնավորված է, որ ոստիկանությունից «Վանաձոր» ՔԿՀ տեղափոխվելուց, նշված հիմնարկը հրաժարվել է նրան ընդունել և ամբաստանյալը կրկին վերադարձվել է ոստիկանություն: Նախաքննության մարմինը նշանակել է փորձաքննություն, սակայն կատարված ռենտգեն-լուսանկարը անհետացել է քր.գործի նյութերից: Դատական բժիշկը տվել է եզրակացություն այն մասին, որ ամբաստանյալի «ռենտգեն ուսումնասիրության պատճառ հանդիսացող մարմնական վնասվածքները կամ գանգատները որևէ կապ չունեն 22.07.2007թ. դեպքի հետ» (հավելված 4, էջ 4-5, պարբ. 3): Նախաքննության մարմինը ամբաստանյալից՝ նրան մերկացնող սկզբնական ցուցմունքը վերցնելիս չի ճշտել, թե ում է քարով հարվածել ամբաստանյալը՝ Վահագին, թե նրա հորը.
- Քննիչը դեպքի վայրի զննությամբ առգրավել է տուժողի հագուստները, սակայն այդ հագուստները անհետացել են գործի նյութերից: Նույնը կատարվել է նաև վկաներից մեկի՝ Գարիկ Գ.-ի հայտնաբերված, բայց առգրավման արձանագրությամբ չարձանագրված արյունոտ վերնաշապիկի հետ.
- Դատական բժշկի եզրակացության համաձայն, տուժողը, ստացել է «բազմաթիվ ծանր վնասվածքներ և հնարավոր չէ առանձնացնել, թե այդ մարմնական վնասվածքներից կոնկրետ որ մեկն է հանգեցրել տուժողի

մահվան: Դատարանում փորձագետը ցուցմունք տալու ժամանակ հայտնել է, որ բացառվում է տուժողի մահը մեկ հարվածի հետևանքով»<sup>2</sup>:

- Հանցագործության գործիքը՝ քարը, հայտնաբերվել է դեպքի հաջորդ օրը, սակայն չի արձանագրվել, հետազայում անհետացել է, ինչի արդյունքում հետազայում կազմվել է գրություն-հանձնարարական՝ այդ շպալի քարի կտորը հայտնաբերելու ուղղությամբ:
- Գործով երեք ականատես վկաներ կռվի մեկ այլ մասնակցի՝ Գարիկ Գ.-ի մոր հետ առերեսման ժամանակ պնդել են, որ «տեսել ու լսել են Գարիկից, որ «Դիլիջանցուն սպանել եմ, գնում եմ հանձնվեմ ոստիկանությանը»: Նույնը պնդել են նաև ամբաստանյալը և չորս այլ վկաներ (**հավելված 4, էջ 6, պարբ. 6**):
- Գարիկ Գ.-ի եղբայրը, որը հետազայում ցուցմունք է տվել ամբաստանյալի դեմ, նախաքննության սկզբում հայտնել էր, որ «շատ խմած է եղել, ոչինչ չի հիշում» (**հավելված 4, էջ 6, պարբ. 4**):

Այս գործով նախադեպային դիրքորոշում էր ակնկալվում հետևյալ հարցի կապակցությամբ, թե՛ արդյոք կարելի է գործի ելքով շահագրգռված, մեղադրյալի նկատմամբ թշնամանք ունեցող տուժողի և վկաների ցուցմունքները դնել մեղադրական դատավճռի հիմքում, երբ գործով չկան օբյեկտիվ այլ ապացույցներ, անգամ՝ սպանության գործիքը, իսկ տուժողների ցուցմունքները մերկացնող բոլորն էլ հակասական են: Բացի այդ, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների առջև պաշտպանության կողմից բարձրացվել էր Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի խախտման երկու հարց՝

1. 3-րդ հոդվածի խախտում՝ ի դեմս խոշտանգումների կիրառման և համապատասխան գանգատի արդյունավետ քննություն չանցկացնելու պնդումը.
2. 6-րդ հոդվածի 3-րդ մասի դ/ կետի խախտում՝ ի դեմս անձի դեմ ցուցմունք տվող վկաներին առերես հարցաքննելու իրավունքի: Ընդ որում, այդ անձանց ցուցմունքները դատարանների կողմից դրվել են մեղադրական դատավճռի հիմքում և վճռորոշ նշանակություն ունեցել անձի դատապարտման համար, ինչը և ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն, հանդիսանում է նշված դրույթի խախտում՝

*«... դատարանում ամբաստանյալը, հենվելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի վրա, հստակ կերպով խնդրել է դատարան հրավիրել տուժողին, նրա ընկերուհուն և պաշտպանական կողմի երկու վկաներին: Այս միջնորդությունը մերժվել է...: Հետևաբար, ոչ դիմումատուն, և ոչ էլ նրա պաշտպանը համարժեք հնարավորություն չեն ունեցել հարցաքննելու վկաներին, որոնց ցուցմունքները՝ տրված իրենց բացակայության պայմաններում և հետազայում արձանագրված մետրոյում հարձակմանն ականատես չեղած ոստիկանության ծառայողի կողմից, վճռորոշ չափով հաշվի են առնվել փաստի հարցերը քննող դատարանների կողմից՝ թե առաջին և թե՛ վերաքննիչ*

<sup>2</sup> Ընդգծումը մերն է:

ասյանում, քանի որ գործի նյութերում որևէ այլ ապացույց չի եղել: Այդ իսկ պատճառով, նրանք ի վիճակի չեն եղել ստուգելու վկաների արժանահավատությունն ու կասկածի տակ դնելու նրանց վստահությունը:

Արդյունքում, պաշտպանական կողմի իրավունքները ենթարկվել են այնպիսի սահմանափակումների, որ պրն. Դելտան զրկվել է արդարացի դատական քննությունից: Հետևաբար, գործում թույլ է տրվել 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի խախտում՝ 1-ին մասի հետ միասին վերցված» (Տե՛ս Դելտան ընդդեմ Ֆրանսիայի գործով ՄԻԵԴ 1990թ. դեկտեմբերի 19-ի վճիռը, կետ 37-րդ; Մարդու իրավունքների եվրոպական դատարանի լրատու, հ-3, էջ 86) (հավելված 5, էջ 6, պարբ. 4):

Վերադարձնելով բողոքը, Վճռաբեկ դատարանը 19.06.2009թ. որոշման մեջ նշել է,

*«ներկայացված բողոքում չկան հիմքեր եզրահանգելու, որ սույն գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և որ ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ» (հավելված 6, էջ 3, պարբ. 7):*

Այսպիսով, վճռաբեկ դատարանը ընդհանրապես չի անդրադարձել փաստական հանգամանքների նմանությանը, հետևաբար և իր իսկ կողմից նախկինում Ս.Բ.-ի գործով կայացված որոշման պարտադիր լինելու խնդրին, մասնավորապես՝ կապված գործով շահագրգռված անձի ցուցմունքների դատապարտման համար վճռորոշ նշանակություն ունենալու իրավունքի հարցի հետ: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը ՀՀ դատական պրակտիկայի միասնականության համար էական նշանակություն չունեցող է համարել իր դիրքորոշումը Կոնվենցիայի նշված երկու խնդիրների վերաբերյալ:

Փաստորեն, ստացվում է, որ եթե նույնիսկ պնդվող դատական սխալը կարող է հանգեցնել անմեղ անձի դատապարտմանը, ապա դա նույնպես չի նշանակում, որ *«ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ»:*

Բացի այդ ծանր խախտում առաջացնելուն անկարող համարվեց պնդվող դատական սխալը, քանի որ պաշտպանը նշում էր, որ դատավճռի հիմքում ընկած են եղել խոշտանգման արդյունքում ձեռք բերված ապացույցները: Մինչդեռ նույն հարցի վերաբերյալ ՎԲ-126/07 գործով Վճռաբեկ դատարանը խոշտանգումների արդյունքում ստացված ապացույցների հիման վրա կայացված դատավճիռը և գործը այդ մասով ուղարկել է լրացուցիչ նախաքննության: Այդ գործով Վճռաբեկ դատարանը նշել է հետևյալը.

*«Ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ի՝ ձերբակալված անձանց բուժզննության մատյանի, ինչպես նաև «Վարդաշեն» ՔԿՀ-ի՝ մարմնական վնասվածքների հաշվառման մատյանի զննությամբ պարզվել է, որ Ստեփան Գալստյանը ՁՊՎ և «Նուբարաշեն» ՔԿՀ է ընդունվել բազմաթիվ մարմնական վնասվածքներով: Նշանակված դատաբժշկական փաստաթղթային փորձաքննությամբ պարզվել է, որ բուժ առարկաներով Ստեփան Գալստյանի առողջությանը թեթև վնաս է պատճառվել, որն առաջացրել է առողջության կարճատև քայքայում:*

*Պարզվել է նաև, որ Արտյոմ Հակոբյանն ու Ստեփան Գալստյանը ձերբակալվել են 2004 թվականի ապրիլի 17-ին, իսկ Աշոտ Հակոբյանը՝ 2004 թվականի ապրիլի 19-ին, սակայն առաջին երկուսը ՁՊՎ մուտք են գործել 2004 թվականի ապրիլի 20-ին, իսկ Աշոտ Հակոբյանը՝ 2004 թվականի ապրիլի 21-ին: Այդ ընթացքում նրանք գտնվել են ոստիկանության Ավանի բաժնում» (հավելված 6.1, էջ 3, պարբ. 7):*

Այս վերջին դատողության մեջ Վճռաբեկ դատարանը հստակորեն հետևել է Եվրոպական դատարանի կողմից հաստատված նախադեպային այն դիրքորոշման վրա, որ անձի առողջական վիճակի համար պատասխանատվություն է կրում այն մարմինը, որի հսկողության տակ նա գտնվել է: Ստեփան Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանը շեշտում է, որ մինչև ՔԿՀ տեղափոխվելը նա եղել է ոստիկանության բաժնում:

Միննույն մոտեցումը ակնկալվում էր նաև քննարկվող գործով, քանի որ այստեղ նույնպես կար փորձագետի եզրակացությունն այն մասին, որ ամբաստանյալի «ռենտգեն ուսումնասիրության պատճառ հանդիսացող մարմնական վնասվածքները կամ գանգատները որևէ կապ չունեն 22.07.2007թ. դեպքի հետ» (տես՝ վերևում), այսինքն՝ որ վնասվածքները ստացված չեն եղել կովի ժամանակ: Սակայն, այս դեպքում Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում ինքնախոստովանական ցուցմունքի թույլատրելիությանը: Վճռաբեկ դատարանը չի արձագանքում նաև այն հանգամանքին, որ բուն ռենտգեն նկարը անհետացել էր գործի նյութերից: Ճիշտ է, քննարկվող գործով Վճռաբեկ դատարանի կողմից որոշման կայացման պահին դատարանի կողմից լրացուցիչ նախաքննության ինստիտուտն արդեն ճանաչվել էր հակասահմանադրական, սակայն ոչինչ չէր խանգարում դատարանին արտահայտելու միննույն նախադեպային դիրքորոշումը նաև սույն գործով:

Բացի այդ, քննարկվող գործով Վճռաբեկ դատարանը նշել է, որ «գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ վերաքննիչ դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատական ստուգման ենթարկելով գործի փաստական հանգամանքների բացահայտման և քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի նորմերի պահպանումը, յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, իրավացիորեն հանգել է այն հետևության, որ գործի քննության ընթացքում նյութական կամ դատավարական իրավունքի խախտումներ թույլ չեն տրվել, ... մեղադրանքը հաստատված է, և,

դատական ակտում տալով ճիշտ քրեաիրավական և անհրաժեշտ հիմնավորումներ, նրա նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ: Հետևաբար, ինչպես նյութական և դատավարական նորմերի, այնպես էլ... կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում տվյալ դեպքում դատարանը չի արձանագրում» **(հավելված 6, էջ 3, պարբ. 5):**

Փաստորեն, բողոքը վերադարձնելու պատճառաբանության առումով, Վճռաբեկ դատարանը պարզապես նշել է, որ վերաքննիչ դատարանը ճիշտ է վարվել, հետևաբար, բողոքում նշված պնդումներն անհիմն են: Բայց թե ինչու է Վճռաբեկ դատարանը համարում այդպես, հետևաբար՝ ինչու են բողոքաբերի պնդումները սխալ, ուստի և՛ վճռաբեկ բողոքը վերադարձման ենթակա, Վճռաբեկ դատարանը չի նշում:

**Համեմատության համար ներկայացնենք** Թիվ ՎԲ-63/07 գործը, որը քննության է առնվել Վճռաբեկ դատարանի կողմից և որով որոշում է կայացվել 06.04.2007թ.: Այդ գործով ամբաստանյալը՝ Մանուշակ Ա-ն, ՀՀ քր.օր. 258-րդ հոդվածի 1-ին մասով 20.12.2006թ. դատապարտվել էր 5 հազար դրամ տուգանքի այն բանի համար, որ փողոցում վիճաբանության մեջ մտնելով տուժողի հետ, «անպարկեշտ ձևով ստորացրել է նրա պատիվն ու արժանապատվությունը, հայհոյել նրան, իսկ հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք է դրսևորել և դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել հասարակական կարգը» **(հավելված 7, էջ 2, պարբ. 1):**

Առաջին ատյանի դատավճիռը չի բողոքարկվել վերաքննիչ դատարան և մտել է ուժի մեջ: Դատավճռի դեմ բողոք է ներկայացրել ՀՀ Զինվորական դատախազը, որը խնդրել է բեկանել դատավճիռը՝ սահմանված սանկցիայի նվազագույնից ցածր պատիժ նշանակված լինելու պատճառով: ՀՀ Վճռաբեկ դատարանը բեկանել է դատավճիռը, նշելով, որ «հանցագործության համար ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ նշանակելը կարգավորվում է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածով» **(հավելված 7, էջ 2, պարբ. 8)**, այնուհետև սրա հիման վրա գտել է, որ ճիշտ չի կիրառվել ՀՀ քր.օր. 397-րդ հոդվածը և «փաստորեն, առկա է դատավարության մասնակիցների նյութական և դատավարական իրավունքի խախտում, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի համաձայն վճռաբեկ բողոք բերելու հիմք է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դատավճիռը ենթակա է բեկանման՝ գործը նոր դատական քննության ուղարկելով, եթե թույլ է տրվել նյութական և քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է դատավճռի օրինականության վրա: Հետևաբար... դատավճիռը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության» **(հավելված 7, էջ 3, պարբ. 3):**

Վճռաբեկ դատարանի այս որոշման մեջ թե «Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը» և թե՛ «Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը» բաժնում չկա որևէ հիշատակում բողոքի ընդունելիությունը հիմնավորող փաստարկների մասին: Մինչդեռ, ընդունելիության մասին որոշումը ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից կայացվել էր ՀՀ քր.դատ.օր 414.2-

րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի հիմքով, այն է՝ «*բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար*»:

Վերադառնալով այն գործին, որի հետ համեմատության մեջ ցանկացանք ներկայացնել այս գործը, կարող ենք արձանագրել, որ մենք չգիտենք, թե ինչու անմեղ անձին 10 տարվա ազատազրկման դատապարտելու պնդվող դատական սխալը «*չի կարող առաջացնել ծանր հետևանքներ*», և թե ինչու խուլիզանության նշված գործով բերված «*բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար*»:

### **1.3. ԳՈՐԾ 3. Նշվում են միևնույն պնդումները, ինչ որ Գործ 1-ում, որոնք Վճռաբեկ դատարանը հրաժարվում է ընդունել վարույթ միևնույն պատճառաբանությամբ:**

Առաջին ատյանի դատարանը 29.08.2008թ. անձին դատապարտել է ՀՀ քր.օր. 138-րդ հոդվածի 1-ին մասով և 133-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և նշանակել ազատազրկում 5 տարի 6 ամիս ժամանակով: Վերաքննիչ դատարանը 25.12.2008թ. դատավճիռը թողել է անփոփոխ: Դատավճռի հիմքում դրվել էին տուժողի՝ Գ.Է.-ի ցուցմունքներն այն մասին, որ դատապարտյալը իրեն ապօրինի պահել էր իր բնակարանում և հանդիսացել բռնաբարության զոհ: Գործում եղած ապացույցներ են հանդիսացել՝

- ամբաստանյալի՝ Կ.Դ.-ի տուժողին ազատությունից զրկելու և բռնաբարելու հանգամանքը ժխտող ցուցմունքները. որ «նրանց մեջ ընդհանրապես սեռական հարաբերություններ չեն եղել և չէին էլ կարող լինել, քանի որ ինքն ընդունակ չէ կնոջ հետ սեռական հարաբերություններ ունենալ ոտքերի թույլ լինելու պատճառով և ոտքերի համար էլ բժշկի նշանակմամբ ստացել է կաթիլային ներարկում» (**հավելված 8, էջ 3, պարբ. 2**).
- վկա Ռ.Ե.-ի՝ տուժողի քրոջ դեպքից գրեթե 3 ամիս անց տված ցուցմունքը այն մասին, որ տուժողը իրեն պատմել է ունեցած սեռական հարաբերության մասին.
- վկա Լ.Կ.-ի՝ ամբաստանյալի կնոջ ցուցմունքն այն մասին, որ նա հեռախոսով զրուցել է տուժողի հետ, որը գովել է ամբաստանյալին և ինքը չի զգացել, որ տուժողը ինչ-որ բանից կաշկանդված է: Տուժողը հիվանդանոցում որպես բուժքույր աշխատելով իր կնոջից առանձին ապրող ամբաստանյալի բնակարան է գնացել ժամը 14-ին և մինչև ժամը 18-ը մնացել է այնտեղ և իր մնալը բնակարանում ամբաստանյալի կնոջը բացատրել է նրանով, որ «չի կարողանում ներարկում կատարել և բացարձակապես ոչ մի խոսք չի ասել, որ Կ.Դ.-ն իրեն ապօրինի, բռնի ձևով, իր կամքին հակառակ, պահում է բնակարանում» (**հավելված 8, էջ 5, պարբ. 2**).
- վկա Ա.Է.-ի՝ տուժողի եղբոր ցուցմունքն այն մասին, որ քույրը իրեն չի պատմել իրեն բռնաբարելու մասին
- վկա Ն.Ա.-ի՝ տուժողի մտերիմ հարևանի ցուցմունքն այն մասին, որ տուժողը իրեն չի պատմել իրեն բռնաբարելու մասին

- «ՄԱՍ» սուպերմարկետի առաքման ծառայության կտրոնը, որը «փաստում է այն հանգամանքը, որ դեպքի օրը ժամը 14 անց 38 րոպեին Կ.Դ.-ն ՄԱՍ սուպերմարկետից խնդրել է ծխախոտ առաքել իր բնակարան, որից հետո, իրոք, ծխախոտը բերել են, Գ.Է.-ն անձամբ ինքն է Կ.Դ.-ի հանձնարարությամբ համապատասխան վճարում կատարել սուպերմարկետի աշխատակցին և ճանապարհել նրան» **(հավելված 8, էջ 5, պարբ. 3)**, ինչից ըստ պաշտպանի, հետևում էր, որ բնակարանի դուռը եղել է բաց և ցանկության դեպքում առանց որևէ խոչընդոտի տուժողը կարող էր հեռանալ Կ.Դ.-ի բնակարանից.
- մեղադրյալի հետ, նրա փաստաբանի ներկայությամբ քննիչի մոտ առերեսման ժամանակ տուժողը առանց քննիչի թույլտվության հեռացել է՝ կիսատ թողնելով առերեսումը.
- փորձագետի միակ եզրակացությունը տրվել է 29.02.2008թ., այսինքն՝ տուժողի՝ իրեն անագատության մեջ պահելու և մարմնական վնասվածքների մասին հայտարարություն տալու հաջորդ օրը: Փորձագետի եզրակացությունը վերաբերել է սուկ մարմնական վնասվածքներին: Հայտարարությունից միայն մեկ ամիս անց հարուցվել է քրեական գործ 133-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և միայն 5 ամիս անց մեղադրանքը լրացվել է բռնաբարության մեղադրանքով, որի հիմքում դարձյալ դրվել են տուժողի նոր ցուցմունքները: «Ընդ որում, քննիչը Գ.Է.-ին տվել է դատաբժշկական ուղեգիր, սակայն Գ.Է.-ն հրաժարվել է բժշկին ներկայանալուց, պատճառաբանելով, որ ամաչում է» **(հավելված 8, էջ 4, պարբ. 1)**: Մինչդեռ դատարանում տուժողը պնդել է, որ ցանկանում է, որպեսզի դատական նիստը լինի դռնբաց **(հավելված 8, էջ 5, պարբ. 4)**.
- տուժողը գրություն է գրել, որ իր և դատապարտյալի միջև իր համաձայնությամբ սեռական հարաբերություն եղել է, որպիսի ցուցմունքից տուժողը հետագայում հրաժարվել է.

Այս գործով նախադեպային դիրքորոշում էր ակնկալվում հետևյալ հարցի կապակցությամբ, թե՛ արդյոք կարելի է գործի ելքով շահագրգռված, մեղադրյալի նկատմամբ թշնամանք ունեցող տուժողի ցուցմունքները և դրանցից ածանցվող վկաների ցուցմունքները դնել մեղադրական դատավճռի հիմքում, երբ գործով չկան օբյեկտիվ այլ ապացույցներ, անգամ՝ բռնաբարության գործով սեռական հարաբերության վերաբերյալ նշանակված դատա-բժշկական փորձաքննության արձանագրությունը, իսկ տուժողի ցուցմունքները հակասական են:

Վերադարձնելով բողոքը, Վճռաբեկ դատարանը 31.05.2009թ. որոշման մեջ նշել է,

*«ներկայացված բողոքում չկան հիմքեր եզրահանգելու, որ սույն գործով կայացվող դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և որ ստորադաս դատարանի կողմից դատավարական կամ նյութական իրավունքի խախտման արդյունքում հնարավոր դատական սխալը կարող է առաջացնել ծանր հետևանքներ»* **(հավելված 9, էջ 3, պարբ. 5)**:

Այսպիսով, վճռաբեկ դատարանը ընդհանրապես չի անդրադարձել փաստական հանգամանքների նմանության, հետևաբար և իր իսկ կողմից նախկինում Ս.Բ.-ի գործով կայացված որոշման պարտադիր լինելու խնդրին, մասնավորապես՝ կապված գործով շահագրգռված անձի ցուցմունքների դատապարտման համար վճռորոշ նշանակություն ունենալու իրավունքի հարցի հետ:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ «գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ստորադաս դատարանները, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման ենթարկելով գործով ձեռք բերված ապացույցները (...) դրանք իրենց համակցության մեջ գնահատելով, հանգել են հիմնավոր հետևության, որ Կ.Դ.-ի գործողությունները համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերի և 138-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներին: Վերը թվարկված ապացույցների առկայության պայմաններում չի հիմնավորվում բողոքաբերի այն փաստարկը, որ սույն գործով հանցագործության դեպքը հաստատվել է միայն գործի ելքով շահագրգռված անձի ցուցմունքներով: Հետևաբար, սույն գործի և վճռաբեկ բողոքում մատնանշված գործի փաստական հանգամանքները չեն համընկնում, որպիսի պայմաններում հնարավոր չէ նաև բողոքարկված դատական ակտի՝ Վճռաբեկ դատարանի թիվ ՎՔԲ-203/05 որոշման առերևույթ հակասելու մասին բողոքաբերների պնդումը» **(հավելված 9, էջ 3, պարբ. 1-2):**

Փաստորեն, բողոքը վերադարձնելու պատճառաբանության առումով, Վճռաբեկ դատարանը պարզապես նշել է, որ վերաքննիչ դատարանը ճիշտ է վարվել, հետևաբար, բողոքում նշված պնդումները անհիմն են: Բայց թե ինչու է Վճռաբեկ դատարանը համարում այդպես, հետևաբար՝ ինչու են բողոքաբերի պնդումները սխալ, ուստի և՛ վճռաբեկ բողոքը վերադարձման ենթակա, Վճռաբեկ դատարանը չի նշում: Այստեղ պետք է նշել, որ Վճռաբեկ դատարանի նշված հիմնավորումները գրեթե անփոփոխ տեքստով անցնում են մերժման մեկ որոշումից դեպի մյուսը:

**1.4. ԳՈՐԾ 4. Նշվում են Գործ 2-ում ձևակերպված միևնույն պնդումները, որոնց քննությունը Վճռաբեկ դատարանը դարձյալ մերժում է նույն հիմնավորմամբ, և որտեղ ապացույցների անբավարարության մասին բարձրացված հարցի քննությունը մերժելիս Վճռաբեկ դատարանը որպես հիմնավորում մատնանշում է ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիությունը:**

Առաջին ատյանի դատարանը 14.06.2008թ. անձին դատապարտել է ՀՀ քր.օր. 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 316-րդ հոդվածի 1-ին մասով, 225-րդ հոդվածի 2-րդ մասով և նշանակել ազատազրկում 6 տարի ժամանակով: Վերաքննիչ դատարանը 03.10.2008թ. դատավճիռը թողել է անփոփոխ: Դատավճռի հիմքում դրվել էին տուժողի՝ Գ.Բ.-ի ցուցմունքները և նույն տուժողի կողմից լուսանկարով կատարված ճանաչումը:

Դատապարտյալը իր վճռաբեկ բողոքում պնդում էր, որ «նշված երեք քննչական գործողությունները որպես առանձին ապացույց գնահատելը սխալ է, դրանք պետք է

գնահատվեն որպես մեկ ապացույց, քանի որ տեղեկությունը ստացվել է մեկ աղբյուրից, մեկ անձից՝ Գ.Ք.-ից», այսինքն՝ տուժողից, և այդ ապացույցները «ինքնին լրացնում են Գ.Ք.-ի տված ցուցմունքը» (հավելված 10, էջ 9, պարբ. 2-3):

Վերադարձնելով բողոքը, Վճռաբեկ դատարանը 07.05.2009թ. որոշման մեջ նշել է, որ չնայած դրանք ձեռք են բերվել նույն աղբյուրից, սակայն դրանք ՀՀ քր.դատ.օր. 104-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, հանդիսանում են ապացույցի տեսակ և որ՝

*«հետևաբար, դատարանը վերոնշյալ ապացույցները համակցության մեջ գնահատելով քրեադատավարական նորմերի պահանջների խախտումներ թույլ չի տվել: Ինչ վերաբերում է նշված ապացույցները մեկ աղբյուրից՝ տուժող Գ.Ք.-ց ստացված լինելու հանգամանքին, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածով սահմանված՝ որպես ապացույց չթույլատրվող նյութերի շարքում, նման հանգամանք ներառված չէ» (հավելված 11, էջ 3, պարբ. 4):*

Փաստորեն, բողոքաբերը վիճարկում էր ապացույցների՝ մեղադրանքը հաստատված լինելու համար բավարար լինելու հանգամանքը, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը բերված հիմքով բողոքը վերադարձնելիս իր այդ որոշումը հիմնավորել է նշված ապացույցների թույլատրելիության հանգամանքով:

Իսկ ապացույցների բավարարության առթիվ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ՝

*«Ստորադաս դատարանները, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման են ենթարկել գործով ձեռք բերված բոլոր ապացույցները և դրանց տալով համապատասխան իրավական գնահատական՝ հանգել են հիմնավոր հետևության գործի լուծման համար դրանց բավարարության մասին» (հավելված 11, էջ 3, պարբ. 5):*

Բայց թե ինչու է Վճռաբեկ դատարանը համարում այդպես, հետևաբար՝ ինչու են բողոքաբերի պնդումները սխալ, ուստի և՛ վճռաբեկ բողոքը վերադարձման ենթակա, Վճռաբեկ դատարանը չի նշում:

ՀՀ վճռաբեկ դատարանն ավելացնում է նաև, որ՝

*«բողոքում հիմնավորված չէ վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ դատական սխալ թույլ տալու հանգամանքը, ինչպես նաև հիմքեր չկան ենթադրելու, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար» (հավելված 11, էջ 5, պարբ. 2):*

**1.5. ԳՈՐԾ 5. Նշվում են միևնույն պնդումները, ինչ որ Գործ 1-ում, որոնք Վճռաբեկ դատարանը հրաժարվում է ընդունել վարույթ միևնույն պատճառաբանությամբ:**

Մեկ այլ ՎԲ-61/08 գործով, որտեղ Ն.Կ.-ն 132 պրիմ. 2-րդ մասի 4-րդ կետով դատապարտվել էր 5 տարվա ազատազրկման, պաշտպանը, հենվելով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի վրա, կրկին որպես նախադեպ խնդրել էր կիրառել Ս.Բ.-ի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27/07/2005թ. որոշումը՝ փաստարկելով, որ ինչպես և այդ, այնպես էլ իր պաշտպանյալի գործով մեղադրական դատավճիռը հիմնված է եղել գործի ելքով շահագրգռված տուժողի ցուցմունքների վրա, որը արտերկրից վերադառնալուց հետո չի դիմել իրավապահ մարմիններին իրեն սեռական շահագործման ենթարկելու մասին հաղորդում տալու նպատակով, այլ միայն 5 ամիս անց օպերատիվ միջոցառումների արդյունքում հրավիրվել է ոստիկանության բաժին: Ընդ որում, գործում առկա էր վկայի ցուցմունքը այն մասին, որ տուժողը իրեն պատմել է, որ «ես գնացել եմ երեխա պահելու, բայց ուրիշ բանով ենք զբաղվել: Եթե Կ.-ն 2000 դոլար ինձ չտա, ես կբողոքեմ» (հավելված 12, էջ 4, պարբ. 3):

Բացի այդ, վճռաբեկ բողոքում պաշտպանը պնդել է նաև 6-րդ հոդվածի 3-րդ մասի դ/ կետով նախատեսված՝ անձի դեմ ցուցմունք սովոր վկաներին առերես հարցաքննելու իրավունքի խախտման մասին: Ընդ որում, այդ անձանց ցուցմունքները դատարանների կողմից դրվել են մեղադրական դատավճռի հիմքում և վճռորոշ նշանակություն ունեցել անձի դատապարտման համար, ինչը և ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն, հանդիսանում է նշված դրույթի խախտում (տես՝ սույն ենթավերնագրի ներքո 2-րդ գործով մեջբերումը ՄԻԵԴ որոշումից): Առերեսում չի անցկացվել ո՛չ նախաքննության, և ո՛չ էլ առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործով դատաքննության ընթացքում: Վերաքննիչ դատարանում միայն մեղադրող դատախազի կողմից ընթերցվել է ՌԴ-ից ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկված գրությունն այն մասին, որ տուժողը գտնվում է Մոսկվա քաղաքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, 28.06.2008թ. իր որոշմամբ վերադարձնելով բողոքը, այս բոլոր փաստարկներին պատասխանել է, որ՝

*«գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ չկան հիմքեր եզրակացնելու, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և որ վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, որն առաջացրել կամ կարող է առաջացնել ծանր հետևանքներ» (հավելված 13, էջ 1, պարբ. 1):*

**2. ՀՀ քր. օր. 70-րդ հոդվածի կիրառումը**

**2.1. Գործ 1.** Թիվ ՎԲ-50/07 գործով Վճռաբեկ դատարանը 30/03/2007թ. մերժել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բողոքը առաջին ատյանի դատարանի 22/11/2006թ. դատավճռի դեմ, որով ամբաստանյալը մեղավոր է ճանաչվել ՀՀ քր.օր. 268-րդ

հողվածի առաջին մասով և 271-րդ հողվածի առաջին մասով և դատապարտվել համապատասխանաբար ազատազրկմամբ վեց ամիս ժամկետով և տուգանքով՝ 30,000 դրամի չափով (**հավելված 14, էջ 2**): Դատավճռով որոշվել է Քր. օր. 70-րդ հողվածի հիման վրա վեց ամիս ժամկետով ազատազրկումը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան մեկ ամիս ժամկետով: Մերժելով բողոքը, Վճռաբեկ դատարանը նշել է,

1. «Քր. օր. 268-րդ հողվածի առաջին մասով նախատեսված հանցագործությունը համարվում է ոչ մեծ ծանրության հանցագործություն» (**հավելված 15, էջ 3, պարբ. 6**),
2. «պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քր. օր.-ը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ հատուկ սահմանափակում չի նախատեսել» (**հավելված 15, էջ 4, պարբ. 5**),
3. «պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանի, այլ նաև հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ հանդիսացող, նրա սոցիալ հոգեբանական, սոցիալ ժողովրդագրական, քրեաբանական և քրեա-իրավական ֆիզիկական հատկությունների համակցության ճիշտ գնահատումը (ընտանեկան դրությունը, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը, դատվածությունը և այլն)» (**հավելված 15, էջ 3, պարբ. 7**): Նշված «հատկությունների» հետ կապված Վճռաբեկ դատարանը նշել է, որ դատապարտյալը.

նախկինում արատավորված չի եղել;  
առաջին անգամ կատարել է ոչ մեծ ծանրության հանցագործություն,  
ընդունել է հանցանքը, և  
զղջացել կատարածի համար:

**2.2. Գործ 2.** Մեկ այլ գործով անձը դատապարտված է եղել ՀՀ քր. օր. 268-րդ հողվածի և 271-րդ հողվածի առաջին մասերով, համապատասխանաբար՝ ազատազրկման վեց ամիս ժամկետով և տուգանքով՝ 50,000 դրամի չափով: Պաշտպանության կողմը վճռաբեկ բողոքում հղում է կատարել Վճռաբեկ դատարանի վերը նշված 2007թ. մարտի 31-ի որոշմանը և խնդրել այն կիրառել որպես նախադեպային դատական ակտ իր գործով (**հավելված 16**): Պաշտպանը, վկայակոչելով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հողվածի 3-րդ և 4-րդ կետերը, նշել է գործով հաստատված այն փաստական հանգամանքները, որոնք իր կարծիքով նույնանման են եղել Վճռաբեկ դատարանի կողմից վերը նշված որոշմամբ լուծված գործի փաստական հանգամանքներին.

1. դատապարտյալը, ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ժամանակ, իրեն լիովին մեղավոր է ճանաչել,
2. զղջացել է կատարվածի համար,
3. բնութագրվում է դրական,

4. դատվածություն չունի, քանի որ վերջինս մարված է և վերջին դատավճռին հաջորդող ամբողջ ժամանակահատվածում նա թույլ չի տվել որևէ օրինախախտում:

Վճռաբեկ դատարանը 2008թ. մայիսի 29-ի որոշմամբ վերադարձնելով պաշտպանի վճռաբեկ բողոքը, նշել է.

*«գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ չկան հիմքեր եզրակացնելու, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Հետևաբար, բերված բողոքում ՀՀ քր. դատ. օր. 414<sup>2</sup>-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ» (հավելված 17, էջ 1, պարբ. 4):*

Փաստորեն, Վճռաբեկ դատարանը.

- չի անդրադարձել պաշտպանի այն հիմնավորումներին, որոնք վերաբերում էին Վճռաբեկ դատարանի պարտադիր ուժ ունեցող որոշման և իր գործի փաստական հանգամանքների նմանությանը:

Մինչդեռ, ինչպես տեսանք, պաշտպանի կողմից որպես բողոքի հիմք նշվել էին այն նույն փաստական հանգամանքները, որոնք Վճռաբեկ դատարանը դրել էր իր՝ պաշտպանի կողմից վկայակոչված որոշման հիմքում: Վճռաբեկ դատարանի երկու որոշումների ուսումնասիրությամբ պարզ չեն այն հիմքերը, որոնց առկայության Վճռաբեկ դատարանը մի դեպքում ընդունել է վարույթ դատախազի ներկայացրած բողոքը և ուժի մեջ թողել առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված պայմանական դատապարտումը, իսկ մյուս դեպքում վերադարձրել պաշտպանի բողոքը և մերժել պայմանական դատապարտման հնարավորությունը: ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը ամրագրում է ՄԻԵԴ-ի նախադեպերի գերակայությունը և նշում, որ ««որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»<sup>3</sup>:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն ընդհանրապես չի անդրադարձել փաստական հանգամանքների նմանությանը՝ հետևաբար և իր իսկ կողմից նախկինում կայացված որոշման պարտադիր լինելու հարցին: Նույնիսկ եթե Վճռաբեկ դատարանը փորձեր փաստական հանգամանքների նմանությունը ժխտել երկրորդ գործով ամբաստանյալի նախկինում դատված լինելու փաստով, ապա այն հիմնավորումը իրավաբանորեն առ ոչինչ կլիներ, թերի կլիներ, քանի որ դատվածության մարումը

<sup>3</sup> Ընդգծումները մերն են:

հանգեցնում է դատվածության, որպես իրավաբանական փաստի առ ոչինչ լինելուն, հետևաբար, չի կարող հիմք հանդիսանալ գործը լուծող այլ որոշում կայացնելու համար: Այսինքն, ամբաստանյալի նախկինում դատված լինելու փաստը չի խաթարում փաստական հանգամանքների այն նմանությունը, որը պնդվում էր պաշտպանի կողմից:

- Եվ դարձյալ, Գլխավոր դատախազի տեղակալի բողոքն ըստ էության լուծելով, Վճռաբեկ դատարանը գոնե հետադարձ կերպով չի հիմնավորել, թե ինչու նրա կողմից գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերված բողոքը քննելը կարող է էական նշանակություն ունենալ դատական պրակտիկայի համար, իսկ պաշտպանինը՝ ոչ, և սա այն դեպքում, երբ փաստական հանգամանքները երկու դեպքում էլ նույնանման են:

**3. 3. Գործ 3.** Թիվ ՀՅՔԸԴ/0011/01/09 գործով ամբաստանյալը մեղավոր էր ճանաչվել ՀՀ քր.օր. 112-րդ հոդվածի 1-ին մասով և պաշտպանը վճռաբեկ բողոքում միջնորդել էր նրա նկատմամբ կիրառել ՀՀ քր.օր-ի 70-րդ հոդվածը: Գործի փաստական հանգամանքները կայանում էին հետևյալում. ամբաստանյալը, որը կին է, իր ծանոթի՝ խուլուհամր մի տղամարդու հետ գտնվել է իր բնակարանում և նրա հետ ճաշելիս է եղել, որի ընթացքում օգտագործել են խմիչք, երբ տուժողը ալկոհոլային հարբածության վիճակում եկել է նրա տուն, խանդի հողի վրա սկսել է հարվածել և հայհոյել ամբաստանյալին և նրա հյուրին, թքել վերջինիս վրա, ինչի հետևանքով նյարդայնացած կինը իր և իր հյուրի «արժանապատվությունը անպարկեշտ ձևով ստորացնելու պատճառով նյարդայնացել է, վերցրել է խոհանոցային դանակը և դրանով առողջությանը վնաս պատճառելու դիտավորությամբ մեկ անգամ հարվածել է» (**հավելված 18, էջ 1, պարբ. 11**) տուժողի «ձախ ուսային հողի շրջանին և պատճառել նրա առողջությանը, կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս» (**նույն տեղում**):

Պաշտպանը ներկայացրել է, որ գործում չկան օրենքով պահանջվող այն օբյեկտիվ փաստերը, որոնց վրա հենվել է ստորադաս դատարանը պայմանական դատապարտումը չկիրառելու համար: Մասնավորապես, որ գործում չեն եղել օբյեկտիվ տվյալներ, որ տանտիրուհու և հյուրի միջև գինարբուք է եղել, և որ ամբաստանյալը հակում ուներ ալկոհոլի նկատմամբ: Պաշտպանը նաև նշել է ՀՀ քր.օր. 70-րդ հոդվածի կիրառումն անհրաժեշտ դարձնող գործում առկա օբյեկտիվ փաստերը՝

1. Տուժողը հարբած իր ընկերների հետ մտել է անձի կնոջ բնակարան, միջամտել նրա անձնական կյանքին (**հավելված 18, էջ 2, պարբ.9**), իրեն անվայելուչ պահելով՝ բռնություն է գործադրել կնոջ և նրա հյուրի նկատմամբ (**հավելված 18, էջ 3, պարբ. 1**), ինչի հիման վրա պաշտպանը պնդել է, որ «ագրեսիվ պահվածք դրսևորած տուժողի վարքագիծն իսկապես հակաօրինական ու հակաբարոյական է և բացառապես դրանով է պայմանավորված հանցագործությունը» (**հավելված 18, էջ 3, պարբ. 2**), և անկախ նրանից, թե արդյոք կինը հանցանքի կատարման պահին եղել է ալկոհոլ օգտագործած վիճակում, թե ոչ, նա իրավունք է ունեցել պաշտպանվելու (**հավելված 18, էջ 3, պարբ. 5**).

2. Ամբաստանյալը խուլ է, այրի է, 5 տարեկան երեխային խնամում է ինքը, ընտանիքի այլ անդամներ չկան (**հավելված 18, էջ 4, պարբ. 2**).
3. Նման պայմաններում հանցագործություն կատարած, նման պայմաններում գտնվող կնոջը «ազատագրկման դատապարտելը անուղղելի վնաս կպատճառի ոչ միայն նրա երեխային, այլև կհակասի ՀՀ քր.օր. 10-րդ հոդվածով նախատեսված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքին, ըստ որի պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի, համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործություններ կանխելու համար» (**հավելված 18, էջ 4, պարբ. 2**):

ՀՀ վճռաբեկ դատարանը, 18.09.2009թ. իր որոշմամբ վերադարձնելով բողոքը, այս բոլոր փաստարկներին պատասխանել է, որ՝

*«Վերոգրյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը, բողոքաբերի կողմից վկայակոչված իրավանորմերի պահանջների պահպանմամբ իր դատական ակտում քննարկման առարկա դարձնելով վերաքննիչ բողոքի նույնանման փաստարկները, իրավացիորեն արձանագրել է, որ առաջին ատյանի դատարանը, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին համապատասխան, գործում եղած բոլոր հանգամանքների գնահատմամբ, այդ թվում տուժողի հակաբարոյական վարքագիծը դիտելով որպես ամբաստանյալի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք, Գ.Ա.-ի նկատմամբ նշանակել է նրան մեղսագրվող հոդվածի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափը, իսկ գործի նյութերում բացակայում են ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերը»<sup>4</sup> Այդ առումով վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավորված է, իսկ նյութական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ բողոքաբերի փաստարկները գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտնում» (**հավելված 19, էջ 2, պարբ. 5**):*

Այնուհետև՝ «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքում հիմնավորված չէ վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ դատական սխալ թույլ տալու հանգամանքը, որը կարող է առաջացնել ծանր հետևանքներ» (**հավելված 19, էջ 3, պարբ. 2**):

Կապված պաշտպանի այն պնդման հետ, որ ստորադաս դատարանները չեն լուծել այն հարցը, թե Գ.Ա.-ին արգելանքի վերցնելու դեպքում ինչպես պետք է ապահովվի առանց հսկողության մնացած նրա երեխայի խնամքի և գոյատևման միջոցների ապահովումը» (**հավելված 19, էջ 2, պարբ. 6**), Վճռաբեկ դատարանը նշել է, որ՝ «ՀՀ

<sup>4</sup> Ընդգծումը մերն է:

քրեական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անչափահասները (.....), որոնք ծնողին կամ կերակրողին արգելանքի վերցնելու, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի այլ գործողությունների հետևանքով մնացել են առանց հսկողության, խնամքի եւ գոյատևման միջոցների, ունեն խնամքի իրավունք, որը նշված մարմինը պարտավոր է նրանց ապահովել պետական բյուջեի միջոցների հաշվին» (հավելված 19, էջ 2, պարբ. 6), և որ «Ա.Գ.-ն արգելանքի չի վերցվել, քրեական վարույթն իրականացնող մարմինը չի կատարել որևէ գործողություն, որի հետևանքով ամբաստանյալի անչափահաս երեխան կարող էր մնալ առանց հսկողության, խնամքի կամ գոյատևման միջոցների, հետևաբար բողոքաբերի կողմից փաստարկված դատավարական իրավունքի խախտման վերաբերյալ փաստարկը հիմնազուրկ է» (**հավելված 19, էջ 3, պարբ. 1**):

Փաստորեն, Վճռաբեկ դատարանը գործը լուծող իր վերջնական որոշմամբ նման պայմաններում գտնվող և նման պայմաններում հանցագործություն կատարած կնոջը անհրաժեշտ է համարել մեկուսացնել հասարակությունից՝ այն դեպքում, երբ նույնիսկ քրեական հետապնդման մարմինը արգելանքի չէր վերցրել նրան: Եվ ըստ Վճռաբեկ դատարանի, մեկուսացման անհրաժեշտությունը կյանքի կոչելիս, որևէ նշանակություն չի տրվել երեխայի առանց մայրական խնամքի մնալուն: Այս առումով, դժվար է պատկերացնել, թե որ գործերով է և ում նկատմամբ անհրաժեշտ կիրառել քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը: Ինչպես և վերը ներկայացված դեպքերում, Վճռաբեկ դատարանը չի հստակեցնում, թե ինչու այս դեպքում պնդվող դատական սխալը, այսինքն՝ 70-րդ հոդվածը չկիրառելը, չի կարող հանգեցնել ծանր հետևանքների:

### **3. ՀՀ քր. օր. 64-րդ հոդվածի կիրառումը**

3.1. Պարույր Բաղրամյանի գործով (ՎԲ-84/07) վճռաբեկ դատարանը նշել է.

*«Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ պատիժ նշանակելիս գործն ըստ էության քննելու իրավասություն ունեցող դատարանները՝ առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանները, ունեն հայեցողություն դրսևորելու ընդարձակ հնարավորություն: Դա, նախ, պայմանավորված է այն հանգամանքով, որ պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները սահմանելիս, օրենսդիրը լայնորեն օգտագործում է գնահատողական ձևակերպումներ «արդարացի պատիժ», «հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճան» (հավելված 20, էջ 3, պարբ. 1):»*

Սակայն այլ գործերով, նույն ՎԴ-ն քննության է առել նման բողոքները և որոշում կայացրել «գործն ըստ էության քննող դատարանների» կողմից «հասարակության համար վտանգավորության աստիճանը» պատշաճ կերպով հաշվի չառնելու մասին՝ չպատճառաբանելով, թե ինչով է պայմանավորված ՎԴ-ի միջամտությունը իր իսկ կողմից ճանաչվող այն «հայեցողության ընդարձակ հնարավորությանը», և ինչու տվյալ գործով «դատարանը» դուրս է եկել անգամ այդ «ընդարձակ սահմաններից» (**հավելված 21, էջ 3, պարբ. 1**):

Վերը նշվածի օրինակ է ՎԲ-145/07 գործով Վճռաբեկ դատարանի որոշումը, որում վերջինս նշում է, որ «պատիժը մեղմացնելու բացառիկ հիմքին հավասարազոր է խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելը» (հավելված 22, էջ 3, պարբ. 1):

Տառացիորեն այդ դիրքորոշումը կրկնվում է Վճռաբեկ դատարանի ՎԲ-13/08 և ՎԲ-25/08 գործով կայացված որոշումների մեջ: Սակայն այդ նույն ՎԲ-13/08 գործով, Վճռաբեկ դատարանը նշում է, որ «ստորադաս ատյանները հանցավորի տղամարդկային արժանապատվությունը նսեմացնելու արհեստածին հանգամանքը դիտել են որպես բացառիկ հանգամանք» (հավելված 23, էջ 3, պարբ. 1): Սակայն, պարզ չէ, թե ինչու է այստեղ Վճռաբեկ դատարանն անտեսում պատիժ նշանակելիս «գործն ըստ էության քննող դատարանների» ունեցած իր իսկ կողմից հռչակված «հայեցողության ընդարձակ հնարավորությունը»: Մանավանդ, որ որպես նախադեպային դիրքորոշում նույն Վճռաբեկ դատարանը դեռևս ՎԲ-55/07 գործով նշել է հետևյալը.

*«Քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը չի բովանդակում հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանն էականորեն նվազեցնող բացառիկ հանգամանքների ցանկը, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանն իրավունք ունի բացառիկ ճանաչել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը» (հավելված 24, էջ 3, պարբ. 1):*

**4. Դրական օրինակներ կապված վերաքննիչ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելու մասին միանձնյա կայացված որոշման և հանձնված անձին այնպիսի հանցագործության համար դատապարտելու հետ, որի համար նա չի հանձնվել**

4.1. Միաժամանակ, պետք է նշել, որ ՎԴ պրակտիկայում կան նաև դրական օրինակներ, երբ միատեսակ մեկնաբանություն է տրվում տարբեր հարցերի՝ դրանցով ապահովվելով կայուն հաստատված պրակտիկայի ձևավորումը (ուղղորդող նախադեպային իրավունք), որը հասնում է պարտադիր նախադեպային իրավունքի աստիճանի: Մասնավորապես, մի շարք գործերով, որոնցով վերաքննիչ դատարանը մեկ դատավորի կազմով որոշում էր կայացրել վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին (*տես՝ ՎԲ-02/07, ՎԲ-12/07, ՎԲ-48/07, ՎԲ-56/07, ՎԲ-59/07, ՎԲ-67/07, ՎԲ-96/07, ՎԲ-133/07*) ՎԴ-ն որոշել է.

Քրեական գործով վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը վերացնելու մասին պահանջը մերժելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու իրավունքի մասին՝

*«Հետևաբար, Ա. Քրնոյանը (իրավունքի այս հարցին առնչվող ՎԴ այլ որոշումներում հղում է արվում հենց այս անդրանիկ գործին. - ծանոթ.)*

իրավունք ունենալ՝ գործով վարույթը կարճելու մասին որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին առաջին աստիճանի դատարանի որոշման դեմ բերելու վերաքննիչ բողոք, իսկ վերաքննիչ դատարանը իրավասու չէր տուժողի իրավահաջորդի վերաքննիչ բողոքը քննության չընդունելու և դրա նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ գլխի կանոնները, ինչպես նաև այդ գլխի հետ օրգանապես կապված 47-րդ գլխի որոշ կանոններ չկիրառելու համար» (հավելված 25, էջ 3, պարբ. 1):

Նույն գործով կապված Վերաքննիչ դատարանի դատավորի կողմից միանձնյա որոշում կայացնելու հետ ՎԴ-ն նշել է հետևյալը.

«ՀՀ քրեական դատավարության 39-րդ հոդվածի 3-րդ մասի և 387-րդ հոդվածի հիման վրա՝ վերաքննիչ դատարանում գործը քննվում է երեք դատավորի կազմով: Այս ընդհանուր իրավանորմից զատ գոյություն չունի ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի գործունեությունը կանոնակարգող որևէ հատուկ իրավադրույթ, որը սահմանի քրեական գործ քննող վերաքննիչ դատարանի այլ կազմ, քան երեք դատավորից բաղկացած դատական կազմն է» (հավելված 25, էջ 3, պարբ. 1):

Բողոքն առանց քննության թողնելու հարցի հետ կապված նույն գործով ՎԴ-ն նշեց՝

«Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 6-րդ մասի «Բողոքը կարող է թողնվել առանց քննության և վերադարձվել դատավարության մասնակցին, եթե այն ստորագրված չէ նրա կամ նրա ներկայացուցչի կողմից, կամ չի պարունակում նշում բողոքարկվող գործողության կամ որոշման մասին»: Իսկ ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության»: Ուստի բացի նշված երկու դեպքից վերաքննիչ դատարանը լիազորված չէ բողոքը թողնել առանց քննության» (հավելված 25, էջ 3, պարբ. 1)::

**4.2.** Որպես մեկ այլ դրական օրինակ կարելի է նշել ՀՀ Վճռաբեկ դատարանի այն հետևողական դիրքորոշումը, որն այն բազմից հայտնել է հանձնումների հետ կապված, երբ հանձնված անձը քրեական պատասխանատվության է ենթարկվել այլ հոդվածով, քան հանձնվել է ՀՀ-ին (տես՝ ՎԲ-03/07, ՎԲ-18/07, ՎԲ-38/07, ՎԲ-130/07, ՎԲ-153/07, և այլն): Վճռաբեկ դատարանը, ելնելով ինչպես ՀՀ կողմից մասնավորապես «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի ներքո ստանձնած միջազգային պարտավորություններից, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից, նկարագրված իրավիճակում անխտիր բոլոր գործերով արձանագրել է խախտում և բեկանել բողոքարկված դատական ակտը, նշելով հետևյալը.

«Հայաստանի Հանրապետություն տեղափոխելուց և նրա վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը վերսկսելուց հետո 2006 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ փոփոխվել է Արամ Ալեքսանյանի մեղադրանքը, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (յուրացնելը կամ վատնելը՝ հանցավորին վստահված ուրիշի գույքի հափշտակությունն առանձնապես խոշոր չափերով), որով նա հանձնված չի եղել, և Ա. Ալեքսանյանը քրեական պատասխանատվության և պատժի է ենթարկվել այդ հոդվածով: Դրանով խախտվել են 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիայի 66-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ, 480-րդ և 499-րդ հոդվածների պահանջները, թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված միջազգային պայմանագրի ոչ ճիշտ կիրառում, որոնք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի, 406-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, հիմք են Արամ Ալեքսանյանի վերաբերյալ դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով բեկանելու և փոփոխելու, այն է՝ նրա արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով որակելու համար, քանի որ դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները տալիս են նման հնարավորություն, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից» (հավելված 26, էջ 3, պարբ. 1):

## 5. Խափանման միջոց կալանքի կիրառության դատական ստուգման պրակտիկան

5.1. Թեև Ասլան Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանը սահմանել է խափանման միջոց կալանքի հիմնավորվածության նոր հիմքեր, այդուհանդերձ, այդ որոշումից հետո վճռաբեկ դատարանը շարունակել է վերադարձնել բողոքներ, որտեղ բարձրացված են եղել նույնանման խնդիրներ:

2008թ. հոկտեմբերի 31-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը կայացրել է Ասլան Ավետիսյանի գործով որոշումը (ԱՎԴ/0022/06/08) (հավելված 27): Որոշման մեջ, ի մի բերելով խափանման միջոց կալանքի հիմքերի վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով սահմանված սկզբունքները, Վճռաբեկ դատարանը սահմանել է ներպետական իրավակիրառ պրակտիկայի և օրենսդրության զարգացման համար նոր հիմքեր: Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, սահմանել է հետևյալ սկզբունքները.

«19...ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված խափանման միջոցի կիրառման հիմքերը չեն կարող այնպես մեկնաբանվել և կիրառվել, որ կալանքի ժամկետը երկարացնելու մասին դատական ակտը պատճառաբանելու համար ընդամենը բավարար լինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված իրավական ձևակերպումների վկայակոչումը կամ վերարտադրումը: Հակառակ պարագայում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սահմանափակման

իրավաչափության դատական երաշխիքը կլինի **պատրանքային**, իսկ հիմնական իրավունքը փաստացի **կրովանդակագրկլի**:

...

22... Կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատական ակտի հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջը պահպանած լինելու համար բավարար չէր օրենքով նախատեսված հիմքերի **պարզ շարադրանքը**, այլ անհրաժեշտ էր կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ դատարանի հետևությունները հիմնավորել գործի **փաստական տվյալներով**:

...

26... Կալանքի ժամկետի երկարացման վերաբերյալ օրենսդրական և նախադեպային կանոնակարգման համադրման և մեկնաբանման հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել հետևյալ երկու պայմանների **միաժամանակյա** առկայության դեպքում.

ա) շարունակվում են առկա լինել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու **հիմքերն ու պայմանները** կամ ի հայտ են եկել անձին կալանքի տակ պահելու նոր հիմքեր.

բ) գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է **անհրաժեշտ ջանասիրություն**՝ ապահովելու գործի քննության ընթացքը.

...

27... Այսպիսով... կալանքի ժամկետը երկարացնելիս ստորադաս դատարանները պարտավոր էին **բավարար փաստերի ներքո** հիմնավորված ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված մեկ կամ մի քանի հիմքի առկայությունը: Բացի այդ, բավարար չափով պետք է հիմնավորվեր տվյալ գործով մինչդատական վարույթն իրականացնող մարմինների **«պատշաճ ջանասիրությունը»** և դրա հիման վրա **բավարար փաստերի ներքո** հիմնավորել նոր քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը»:

Խափանման միջոց կալանքի նշանակումը կամ նշանակված կալանքի երկարաձգումը գործի փաստական տվյալներով, կոնկրետ ու վերաբերելի ապացույցներով հիմնավորելու անհրաժեշտության մասին սահմանվել է նաև Վճռաբեկ դատարանի մեկ այլ՝ 30/08/2007թ. կայացված ՎԲ-132/07 (**հավելված 28**) որոշումով.

«[ՀՀ քր.դատ.օր-ի 135-րդ]... հոդվածի բովանդակությունից հետևում է, որ կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ: Ընդ որում, այդ կանխատեսող գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված **որոշակի նյութերով**, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը:

**(Էջ 3, վերջին պարբերություն):**

*«...ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են **ապացույցների որոշակի ամբողջությամբ** և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը»*

**(Էջ 3, 6-րդ պարբերություն):**

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը սահմանել է կալանքի հիմքերի նոր ինստիտուցիոնալ շեմ. կալանքը հիմնավոր է, եթե միաժամանակ առկա են հետևյալ երկու հանգամանքները. 1) կոնկրետ և վերաբերելի փաստեր, ապացույցների և հանգամանքներ, և 2) քննություն իրականացնող մարմինը դրսևորել է անհրաժեշտ ջանասիրություն:

Սակայն նկատելի է, որ այդ նախադեպի ընդունումից հետո Վճռաբեկ դատարանը շարունակել է վերադարձնել այնպիսի բողոքներ, որոնցում բարձրացված են եղել նշված չափանիշներից մեկի կամ երկուսի բացակայության մասին պնդումներ: Բերենք մի քանի օրինակներ:

Փաստաբան Մելանյա Առուստամյանը Հակոբ Հակոբյանի գործով վճռաբեկ բողոքում ներկայացրել է, որ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կալանքի ժամկետը չորրորդ անգամ երկարաձգելիս առաջին ատյանի դատարանը և վերաքննիչ դատարանը իրենց հետևությունները չեն հիմնավորել գործի փաստական տվյալներով, այլ դրա փոխարեն գուտ շարադրել են ՀՀ. քր. դատ. օր.-ի 135-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերը (**հավելված 29**): Այս երևույթը բացառվել է Վճռաբեկ դատարանի կողմից Ասլան Ավետիսյանի գործով որոշմամբ, որտեղ դատարանը հայտարարել է, որ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատական ակտի հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջը պահպանած լինելու համար բավարար չէ օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքը, այլ անհրաժեշտ է կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ դատարանի հետևությունները հիմնավորել գործի փաստական տվյալներով (**հավելված 27, պարբ. 22**): Տվյալ դեպքում փաստաբանը իր վճռաբեկ բողոքում վիճարկել է Վերաքննիչ դատարանի հետևյալ ձևակերպումը.

*«...Նրան վերագրվող պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է: Նրան վերագրվող արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, գործի կոնկրետ հանգամանքները, բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալ Հակոբ Հակոբյանը մնալով ազատության մեջ կարող է խուսափել քննությունից, ապօրինաբար հակազդել գործով օրյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու ընթացքին՝ մյուսների հետ անօրինական համաձայնության*

գալուն ուղղված ակտիվ գործողությունների իրագործելու, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ներագդելու եղանակով, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, նոր հանցանքներ կատարելու առումով, իսկ գործով անհրաժեշտ է կատարել քննիչի միջնորդության մեջ նշված դատավարական գործողություններ, որոնց կապակցությամբ էլ միջնորդել է նշված ժամկետով երկարացնել խափանման միջոց կալանքի ժամկետը և դրանք հիմնավորող հանգամանքները շարադրվել են քննիչի միջնորդության և ընդհանուր իրավասության դատարանի որոշման մեջ» (հավելված 30, էջ 8, պարբ. 4):

Ավելին, Ասլան Ավետիսյանի գործով սահմանվել է.

«...Իսկ ինչ վերաբերում է անձին մեղսագրվող հանցանքի ծանրությանը, ապա թեև այն էական նշանակություն ունի ազատության մեջ գտնվող մեղադրյալի դրսևորվող վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում, սակայն այդ հանգամանքը պետք է գնահատվի գործում առկա մնացած, մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում մատնանշված հանգամանքների համատեքստում...» (հավելված 27, պարբ. 26):

Այսինքն, մեղադրյալի անձը, տարիքը և առողջական վիճակը, զբաղմունքի տեսակը, ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը, գույքային դրությունը, բնակության մշտական վայրի առկայությունը նույնպես էական հանգամանքներ են, որոնց անհրաժեշտ է անդրադառնալ՝ ըստ Ասլան Ավետիսյանի գործով վճռի, մինչդեռ Վերաքննիչ դատարանը դրանց չէր անդրադարձել:

Փաստաբանը նաև պնդում էր, որ վերաքննիչ բողոքում վկայակոչված են եղել Եվրոպական դատարանի մի շարք նախադեպեր, որոնք և՛ փաստերի, և՛ իրավունքի մասին հարցերով բարձրացնում էին նույնանման հարցեր, սակայն վերաքննիչ դատարանը գտել է, որ «դրանք սույն գործի փաստական հանգամանքների հետ որևէ նմանություն կամ կապ չունեն և դրանցում քննության առարկա հարցերը իրենց բնույթով և բովանդակությամբ չեն կարող զուգահեռներ ունենալ սույն գործի հետ» (հավելված 30, էջ 9, պարբ. 2): Այլ պատճառաբանություն վերաքննիչ դատարանը չի ներկայացրել:

Այժմ տեսնենք, թե ինչպես է Վճռաբեկ դատարանը կայացրել որոշում բողոքը հետ վերադարձնելու մասին: Ըստ էության, պատճառաբանական մասը ներառում է միայն հետևյալ հիմնավորումը.

«Գործի նյութերից երևում է, որ չկան հիմքեր եզրակացնելու, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և որ վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ, ինչպես նաև

*վերանայվող դատական ակտը առերևույթ հակասում է ՄԻԵԴ-ի և Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին: Հետևաբար, բերված բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերը հիմնավորված չեն» (հավելված 31, էջ 2, պարբ. 2):*

Փաստորեն, Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել բարձրացված այնպիսի հարցերի, որոնց լուծում էր տվել Ասլան Ավետիսյանի գործով կայացրած որոշմամբ, այն է՝ կալանքի ժամկետի երկարաձգումը ՀՀ քրեական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի պարզ շարադրմամբ՝ առանց գործով կոնկրետ փաստեր, հանգամանքներ և ապացույցներ վկայակոչելու: Մելանյա Առուստամյանի վճռաբեկ բողոքը գրեթե ամբողջությամբ հիմնված էր նման պնդումների վրա:

Անհրաժեշտ է նաև նշել, որ Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել նաև այն հարցին, թե ինչու էր Վերաքննիչ դատարանը որոշել, որ փաստաբանի կողմից վկայակոչված Եվրոպական դատարանի որոշումները քննվող գործի փաստական հանգամանքների հետ որևէ նմանություն կամ կապ չունենին: Ակնկալվում էր, որ Վճռաբեկ դատարանը պետք է որ անդրադառնար այդ հարցին նույնպես, քանի որ որոշումը կայացնելու պահին արդեն իսկ կայացրած էր եղել Ս. Այվազյանի գործով իր հայտնի որոշումը (Քրեական գործ թիվ ՎԲ-17/08) (հավելված 32), որտեղ դատարանը սահմանել է, թե որ դեպքում է պահանջվում փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն, և որ դեպքում՝ փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրություն վկայակոչված գործը սույն գործով վերաբերելի նախադեպ համարելու համար: Առավել ևս, որ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը ամրագրում է վճռաբեկ դատարանի նախադեպերի գերակայությունը և նշում, որ «որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի...դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:<sup>5</sup> Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը որևէ փաստարկ չէր նշել իր որոշման մեջ, ինչը անտեսվել է նաև Վճռաբեկ դատարանի կողմից:

Որպես վերը նշվածի որոշման հակասություն վճռաբեկ դատարանի պրակտիկայի հետ, այլ գործերով մենք տեսնում ենք, որ Վճռաբեկ դատարանը ծանրակշիռ փաստարկների հիմնավորմամբ պատճառաբանել է փաստաբանի վկայակոչած նախադեպը տվյալ գործով կիրառելի չլինելու հանգամանքը: Օրինակ, ԵՔԴ/0373/01/08 գործով բերված վճռաբեկ բողոքում (հավելված 33) փաստաբանը պնդում էր, որ մեղադրանքի հիմքում դրվել էին միայն գործի էլքով շահագրգռված անձի՝ տուժողի ցուցմունքները և այս առումով բողոքարկվող դատական ակտը հակասում է Վճռաբեկ դատարանի ՎԲԲ-203/05 որոշմանը (հավելված 34), որտեղ այն իրավական դիրքորոշումն է արտահայտվել, որ միայն գործի էլքով շահագրգռված

<sup>5</sup> Ընդգծումը մերն է:

անձի ցուցմունքները բավարար չեն հանգելու այն համոզմանը, որ հանցագործության դեպքը տեղի է ունեցել: Սակայն Վճռաբեկ դատարանը բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ (**հավելված 35**) հանգամանալիորեն, այլ ոչ թե վերացական արտահայտությամբ, շարադրել է, որ ստորադաս ատյանները մեղադրյալի գործողությունները գնահատել են ոչ միայն տուժողի ցուցմունքների, այլ նաև հինգ այլ վկաների ցուցմունքների հիման վրա՝ ներառյալ նաև դատաբժշկական փորձագիտական եզրակացությունը և տուժողի կողմի կազմած մեկ այլ գրությունը, որը ճանաչվել է որպես այլ փաստաթուղթ: Նման կերպ կայացված որոշումը բավարարում է իրավական որոշակիության պահանջին՝ վկայակոչված նախադեպը չկիրառելը պատճառաբանված լինելու առումով:

Վերևում ներկայացվեց միայն մեկ օրինակ այն մասին, թե ինչպես է Վճռաբեկ դատարանը բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելիս հեռանում (կամ շեղվում) Ասլան Ավետիսյանի նախադեպից: Քանի որ նման օրինակները շատ են, ներկայացնենք միայն մի քանիսը համառոտ մեջբերումներով.

- Սևակ Խաչատրյանի գործով 16/10/2008թ. բերված վճռաբեկ բողոքում (ընդդեմ 18/09/08 վերաքննիչ դատարանի որոշման) փաստաբան Լուսինե Սահակյանը պնդում էր, որ վերաքննիչ և առաջին ատյանի դատարանների որոշումներում վերջիններս կալանքի անհրաժեշտությունը հիմնավորել են քր. դատ. օր.-ի 135-րդ հոդվածի իրավական ձևակերպումների պարզ վկայակոչումով և վերարտադրությամբ, իսկ որպես փաստացի հանգամանք վկայակոչվել է միայն պատժաչափի խստությունը: Դա հիմնավորելու համար բերվել են մեջբերումներ որոշումներից (**հավելված 36, էջ 4**): Նմանատիպ բողոք է բերվել 22/12/2008թ.ին ընդդեմ 24/11/2008 վերաքննիչ դատարանի որոշման (**հավելված 37**): Բողոքներում վկայակոչվել է 30/08/2007թ. թիվ ՎԲ-132/07 նախադեպը: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ երկրորդ բողոքը ներկայացնելիս արդեն կայացված է եղել Ասլան Ավետիսյանի գործով հայտնի նախադեպը 31/10/2008թ.-ին:
- Նույն գործով 12/06/2009թ. նմանատիպ բողոք է բերվել Վերաքննիչ դատարանի 01/06/2009թ. որոշման դեմ (**հավելված 38**), որում, ի թիվս այլ փաստարկների, նշվել է, որ դատարաններն օրենքով սահմանված կարգով չեն քննել խափանման միջոցի հիմնավոր կամ անհիմն լինելը, որ դատարանների որոշումները պատճառաբանված չեն եղել, այլ վերջիններս բավարարվել են ընդհանուր և շաբլոնային բնույթի արտահայտություններով (էջ 7, պարբ. 1-5): Կրկին, անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ բողոքը բերվել է Ասլան Ավետիսյանի նախադեպից մոտ յոթ ամիս անց և, հետևաբար, այս նախադեպը նույնպես արդեն ընդունված է եղել, երբ վճռաբեկ դատարանը կայացրել էր բողոքը մերժելու մասին որոշումը: Իր որոշման մեջ Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել

պատճառաբանված որոշում կայացրած լինելու մասին պնդումներին (հավելված 39):

- Արթուր Հակոբյանի գործով 28/07/2009թ. վճռաբեկ բողոքը 15/07/2009թ. վերաքննիչ դատարանի որոշման դեմ (հավելված 40, էջ 4-7): Բողոքը մերժվել է: Թեև վճռաբեկ դատարանը մանրամասնորեն անդրադարձել է «հիմնավոր կասկածի» մասին փաստարկներին, սակայն «կալանքի կիրառման անհրաժեշտությունը միանման, ընդհանուր բնույթի արտահայտություններով» հիմնավորելու մասին փաստարկներին անդրադարձել է հետևյալ անորոշ արտահայտությամբ.

*«Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանը կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշում է կայացրել տվյալ խափանման միջոցը կիրառելու կարգը սահմանող քրեադատավարական նորմերի պահանջների պահպանմամբ, այն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված է» (հավելված 41 էջ 4, պարբ. 2):*

- Արտակ Մուսայելյանի գործով 28/07/2009թ. վճռաբեկ բողոքը 15/07/2009թ. վերաքննիչ դատարանի որոշման դեմ (հավելված 42, էջ 4-9): Կայացվել է նմանատիպ որոշում բողոքը վերադարձնելու մասին (հավելված 43, էջ 4, պարբ. 2):
- Արմեն Գրիգորյանի գործով 22/12/2008թ. վճռաբեկ բողոքը 01/12/2008թ. վերաքննիչ որոշման դեմ, որտեղ փաստաբանը փաստարկել է հետևյալը.

*«...ինչպես Արմեն Գրիգորյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննական մարմնի միջնորդության մեջ, այնպես էլ այն բավարարելու մասին ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ կալանքի անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը հիմնավորվել են ոչ թե կոնկրետ և վերաբերելի փաստերով և հանգամանքներով, այլ միանման, ընդհանուր և շարժունային բնույթի արտահայտություններով: Որևէ կերպ դատարանը չի փորձել իր կողմից նշված ընդհանուր, շարժունային արտահայտությունները հիմնավորել միջնորդության քննության, կամ նույնիսկ «քրեական գործի նյութերի ուսումնասիրության» ընթացքում իրեն հայտնի դարձած որևէ փաստական հանգամանքով: Ուստի նշած որոշումը որևէ կերպ չի կարող համարվել պատճառաբանված: Վերաքննիչ դատարանն իր հերթին կայացրած որոշմամբ ընդհանրապես չի անդրադարձել ընդհանուր իրավասության դատարանի*

*որոշման պատճառաբանված չլինելու հանգամանքին»:*  
(Հավելված 44, էջ 7, պարբ. 6):

- Նույն գործով 23/02/2009թ. վճռաբեկ բողոքը 27/01/2009թ. վերաքննիչ դատարանի որոշման դեմ (տե՛ս հավելված 45, էջ 4-8): Երկու դեպքում էլ վճռաբեկ բողոքները վերադարձվել են նմանատիպ որոշումներով (հավելված 45(1):
- Արթուր Հայրապետյանի գործով 16/09/2008թ. վճռաբեկ բողոքը 26/09/2008թ. վերաքննիչ դատարանի որոշման դեմ (տե՛ս հավելված 46, էջ 5-6):
- Գագիկ Ջհանգիրյանի գործով 16/04/2008թ. վճռաբեկ բողոքը առաջին աստյանի 27/02/2008թ. և 07/03/2008թ. վերաքննիչ դատարանի որոշումների դեմ (հավելված 47, էջ 6-8), վճռաբեկ բողոքը առաջին աստյանի 18/04/2008թ. և վերաքննիչ դատարանի 08/05/2008թ. որոշումների (հավելված 48, էջ 7-8) և 02/08/08 վճռաբեկ բողոքը 19/06/2008թ. առաջին աստյանի և 02/07/2008թ. որոշումների դեմ (հավելված 49 էջ 7-9):
- Մհեր Հովհաննիսյանի գործով 01/09/2009թ. վճռաբեկ բողոքը առաջին աստյանի դատարանի 03/08/2009թ. և քրեական վերաքննիչ դատարանի 14/08/2009թ. որոշումների դեմ (հավելված 50, էջ 5-6):

**5.2. Թեև Վարդան Մինասյանի գործով Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավական կարգավորումը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կալանքի օրինականության սկզբունքին, այդուհանդերձ, այս որոշումից հետո ներկայացված մի շարք բողոքներ, որտեղ բարձրացված են եղել նմանատիպ հարցեր, վերադարձվել են:**

2009թ. ապրիլի 10-ին Վճռաբեկ դատարանը կայացրել է թիվ ՀՅՔԲԴՅ/0106/01/08 որոշումը (հավելված 51): Նշված որոշումն իր բնույթով աննախադեպ էր և ներկայացնում էր մեծ կարևորություն, քանի որ դատարանը սահմանել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138 հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավական կարգավորումը, մասնավորապես, մեղադրողի կողմից գործը դատարան ուղարկված լինելու հիմքով անձին կալանքի տակ պահելու ժամկետի կասեցումը, հակասում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կալանքի օրինականության սկզբունքին: Այդուհանդերձ, մի շարք բողոքներում, բերված սույն որոշումից հետո, Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել բողոքում բարձրացված նույնանման հարցին, որը հակառակ դեպքում պետք է որ լուծում ստանար թիվ ՀՅՔԲԴՅ/0106/01/08 որոշումով:

Սմբատ Այվազյանի գործով բերված վճռաբեկ բողոքում պաշտպանը պնդում էր, որ 14.07.2008թ-ին. «քրեական գործի դատական քննություն նշանակելու մասին» որոշումը կայացնելիս դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 300-րդ հոդվածը և նշված որոշումը կայացնելիս ընդհանրապես չի անդրադարձել Սմբատ Այվազյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցին, որի հետևանքով 15.07.2008թ. լրացել է Ս.Այվազյանին կալանքի տակ պահելու ժամկետը և դրանից հետո նա անազատության մեջ է գտնվել ապօրինի, առանց օրենքով սահմանված կարգով ընդունված դատարանի որոշման: Պաշտպանը նաև պնդում էր որ, Ս.Այվազյանին անհապաղ ազատ արձակելու մասին 22.07.2008թ. միջնորդությունը ստանալուց հետո, դատարանը կազմել է 22.07.2008թ. թվագրված որոշում «վրիպակն ուղղելու մասին», որում նշել է, թե տեղի է ունեցել վրիպակ և գործը դատական քննության նշանակելու մասին որոշման եզրափակիչ մասում ավելացվել է «խափանման միջոցը թողնել անփոփոխ» արտահայտությունը: Դրանով դատարանը փորձել լուծում գտնել ստեղծված իրավիճակից: Պաշտպանը պնդում էր, որ «վրիպակն ուղղելու մասին» որոշման ձևական լինելն ապացուցվում է 14.07.2008թ. «քրեական գործի դատական քննությունն նշանակելու մասին» որոշմամբ, որի նկարագրական մասում որևէ նշում չկա Սմբատ Այվազյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցի մասին, այսինքն էթե դատարանը տվյալ որոշմամբ ցանկանար անդրադառնալ խափանման միջոցի հարցին, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի համաձայն պարտավոր կլինեք քննել Ս.Այվազյանի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու և դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը՝ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում: Պաշտպանը գտնում էր, որ էթե անգամ ընդունենք «վրիպակն ուղղելու մասին» որոշմամբ կատարված ավելացումը, ապա այդ դեպքում ստացվում է, որ դատարանը 14.07.2008թ. այնուամենայնիվ կայացրել է չպատճառաբանված որոշում, որը նույնպես չի կարող համարվել օրինական հիմք անձին անազատության մեջ պահելու համար:

Վճռաբեկ դատարանը բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված փաստարկներին անդրադարձել է մեկ նախադասությամբ. *«Գործի նյութերից երևում է, որ Ս. Այվազյանը կալանքի տակ է գտնվել դատարանի որոշմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան և այսօր էլ նա օրինական կերպով կալանքի տակ է իրավասու դատարանի կողմից դատապարտվելուց հետո /Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետ/»:* (հավելված 53,( էջ 5,( պարբ. 4): Նույնիսկ էթե հաշվի առնենք, որ փաստաբանի կողմից վիճարկվող անօրինական կալանքի ժամանակահատվածը կլանվել էր դատարանի որոշմամբ դատապարտվելու հիմքով կալանքի ժամկետով, մինևնույն է, «օրենքի միատեսակ կիրառության» տեսանկյունից անհրաժեշտ էր, որպեսզի վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում հայտնեք բողոքում ներկայացված հարցի առնչությամբ՝ անկախ այն հանգամանքից, որ բողոքարկվող դատական ակտերը կորցրել էին իրենց իրավական նշանակությունը և որ դրանք այլևս իրավաբանորեն գոյություն չունենին: Այդպիսի դիրքորոշում դատարանը դրսևորել էր Ասլան Ավետիսյանի գործով որոշման մեջ (հավելված 27, պարբ. 39-41):

**5.3. Բողոքում ներկայացված էական նշանակություն ունեցող իրավաբանական փաստի անտեսում, որին անդրադառնալու դեպքում այդ հիմքով ներկայացված փաստարկները լուծում կստանային արդեն հաստատված նախադեպային իրավունքով:**

Սևակ Խաչատրյանի գործով վերաքննիչի դատարանի 01/06/2009թ որոշման դեմ ներկայացրած վճռաբեկ բողոքում փաստաբանը հիմնվել է Վարդան Մինասյանի գործով որոշման մեջ արված հետևյալ նախադեպային ձևակերպման վրա.

*«Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրողի կողմից գործը դատարան ուղարկված լինելու հիմքով անձին կալանքի տակ պահելու ժամկետի կասեցումն անձի ազատության իրավունքի անօրինական սահմանափակում է: Ուստի ՀՀ քրեադատավարական օրենքի 138-րդ հոդվածի 3-րդ մասում առկա կարգավորումը հակասում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասին...» (տե՛ս հավելված 51, պարբ. 26):*

Նշվածի հիման վրա բողոքաբերը պնդում էր, որ առաջին ատյանի դատարանը 2009թ. մայիսի 12-ին կալանքից անհապաղ ազատ արձակելու մասին պաշտպանների միջնորդությունը քննության առնելու մասին որոշման մեջ, անդրադառնալով նաև հունվարի 7-ին սպառված խափանման միջոց կալանքի ժամկետը երկարաձգելու մասին հարցին և որոշելով այն թողնել անփոփոխ, կատարել է հետևյալ ձևակերպումը, որն առերևույթ հակասում է վերը նշված նախադեպային դրույթին.

*«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, «քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ քրեական գործն ուղարկվում է դատարան», հետևաբար ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերը նշված նորմերի մեկնաբանությունից դատարանը եզրակացնում է, որ ՀՀ քր. դատ. օր-ի 138-րդ հոդ. չի հակասում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետին, ինչպես նշված է միջնորդության մեջ» (տե՛ս հավելված 54):*

Ակնհայտ է, որ վերը նշված երկու սահմանումները հակասում են միմյանց: Հետևաբար, նշվածն ինքնին հիմք էր, որպեսզի վճռաբեկ բողոքն ընդունվեր առնվազն ՀՀ քր. դատ. օր.-ի 414<sup>2</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով՝ վերանայվող դատական ակտը առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին: Վճռաբեկ դատարանը որոշել է.

*«Մինչդեռ բողոք բերած անձինք որևէ ապացույց չեն ներկայացրել ի հիմնավորումն այն փաստարկի, որ Ս. Խաչատրյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորման ժամկետը լրացել է 2009 թվականի հունվարի 7-ին, այդպիսիք բացակայում են նաև ներկայացված նյութերում, հետևաբար, վիճարկվող որոշման՝ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշմանը հակասելու մասին փաստարկը նույնպես չի հաստատվում» (տե՛ս հավելված 39, էջ 3, պարբ. 4)*

Նման պատճառաբանությունը չէր բխում գործի նյութերից, քանի որ կալանքի ժամկետը հունվարի 7-ին սպառված լինելու հանգամանքը առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված իրավաբանական փաստ էր, որի մասին վերջինս նշել էր իր որոշման «գործի դատավարական նախապատմությունը» բաժնում հետևյալ շարադրմամբ.

*«Հետագայում, գործի նախաքննության ընթացքում նրան կալանքի տակ պահելու ժամկետը դատարանի որոշմամբ մի քանի անգամ երկարացվել է, վերջին անգամ՝ մինչև 2009թ. հունվարի 7-ը»:*

**(հավելված 54,( էջ 2,( պարբ. 2)(**

Հետևաբար, վճռաբեկ դատարանը ոչ մի պատճառ չունեի չհավատալու առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված իրավաբանական փաստի գոյությանը և պաշտպանից պահանջել ներկայացնել նշված փաստը հաստատող ապացույց: Բացի այդ, ակնհայտ է, որ նման մոտեցումը խիստ անսպասելի էր պաշտպանի համար և վերջինս չէր կարող ողջամտության սահմաններում կանխատեսել, որ վճռաբեկ դատարանը նման ապացույց կպահանջեր պաշտպանից: Բոլոր դեպքերում կարելի է եզրակացնել, որ վճռաբեկ դատարանը ոչնչով կաշկանդված չէր կիրառել Վարդան Մինասյանի գործով իր հայտնի եզրահանգումը, որն արդեն իսկ կարող էր իրավական հետևանք առաջացնել մեղադրյալի հանդեպ:

Մեկ այլ գործով բերված վճռաբեկ բողոքում բողոքարկուն պնդում էր, որ առաջին ատյանի դատարանը բավարարել էր քննիչի միջնորդությունը խափանման միջոց կալանք ընտրելու մասին այն դեպքում, երբ միևնույն ժամանակ առկա էր նույն անձի նկատմամբ կասկածյալի կարգավիճակում անազատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոց ընտրելու մասին չվերացված որոշում (ստորագրություն չհեռանալու մասին): Այս գործի փաստերը հետևյալն են. 2009թ. հունիսի 29-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով: Հուլիսի 1-ին անձի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել «Ստորագրություն չհեռանալու մասին»: Հուլիսի 3-ին ներգրավվել է որպես մեղադրյալ և միջնորդություն է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին: Նույն օրը դատարանը բավարարել է միջնորդությունը: Օգոստոսի 8-ին պաշտպանը բերել է վերաքննիչ բողոք դատարանի որոշման դեմ: Օգոստոսի 24-ին նախաքննական մարմնի կողմից որոշում է կայացվել հուլիսի 1-ին մեղադրյալի նկատմամբ «Ստորագրությունը չհեռանալու մասին» խափանման միջոցը վերացնելու մասին: Օգոստոսի 25-ին վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և օգոստոսի 27-ին բողոքը մերժվել է: Բողոքը մերժելիս Վերաքննիչ դատարանը նշել է, որ վերաքննիչ դատարան ներկայացված նյութերով չի հիմնավորվել, որ նույն անձի նկատմամբ գոյություն են ունեցել մեկը մյուսի հետ կապակցված երկու խափանման միջոցներ: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առնել, որ «ստորագրություն չհեռանալու մասին» որոշումը վերացվել էր մեկ օր առաջ, մինչդեռ երկու զուգահեռ որոշումները ՀՀ քր. դատ. օր-ի 134-րդ հոդվածի 4-րդ մասի խախտմամբ գոյություն են ունեցել հուլիսի 3-ից մինչև օգոստոսի 24-ը:

Ներկայացրած վճռաբեկ բողոքում պաշտպանը պնդում էր, որ բացի այն, որ նույն անձի նկատմամբ տևական ժամանակ գոյություն են ունեցել երկու տարբեր խափանման միջոցներ կիրառելու մասին զուգահեռ որոշումներ, երկու օրվա տարբերությամբ կայացված որոշումներում ներկայացված հիմքերն ուղիղ հակադարձ կերպով հակասել են միմյանց: Այսպես, հուլիսի 1-ին քննիչի կողմից կայացրած «Ստորագրություն չհեռանալու մասին» որոշման պատճառաբանական մասում, որպես այդ խափանման միջոցն ընտրելու հիմնավորում, քննիչը նշել է հետևյալը.

*«Նկատի ունենալով, որ Մեյրան Չոզինյանն առաջին անգամ կատարել է միջին ծանրության հանցագործություն, ունի մշտական բնակության վայր, անձը հաստատող փաստաթուղթ, բնութագրվում է դրական, նախկինում չի դատապարտվել, չի թաքնվի վարույթն իրականացնող մարմնից, ուստի...»:*

**(Հավելված 50, ( էջ 4, ( պարբ. 7):**

Խափանման միջոց կալանքը ընտրելու մասին որոշման մեջ նշվել է հետևյալ պատճառաբանությունը.

*Ծանոթանալով միջնորդությանը, ստուգելով դրա հիմնավորվածությունը հաստատող փաստաթղթերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմքեր են տալիս ենթադրելու, որ մեղադրյալն ազատության մեջ մնալով կարող է թաքնվել քննությունից, խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությունը, ինչպես նաև...հաշվի առնելով արարքի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, դատարանը գտնում է...»:*

**(Հավելված 50, էջ 2, ( պարբ. 8)**

Կալանքի միջնորդության քննարկման ժամանակ քննիչը դատարանին չի ներկայացրել «Ստորագրություն չհեռանալու մասին» որոշումը: Կարծում ենք դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ իր որոշման մեջ ներկայացված պատճառաբանությունը հակասում էր կալանքի համար բերված միջնորդության պատճառաբանություններին: Ներկայացված վճռաբեկ բողոքում պաշտպանը ներկայացրել է վերը նշված հակասությունները և որպես ապացույց իր միջնորդությանը կցել է վերաքննիչ դատարանի որոշումը, քննիչի 01/07/2009թ. «Ստորագրություն չհեռանալու մասին» որոշման և ձերբակալման արձանագրության պատճենները որպես ապացույց, որ առնվազն հուլիսի 3-ից մինչև քննչական մարմնի կողմից 01/07/2009թ. որոշումը վերացնելու օրը մեղադրյալի (կասկածյալի) նկատմամբ ուժի մեջ են եղել երկու զուգահեռ որոշումներ՝ ի խախտումն քր. դատ. օր.-ի 134-րդ հոդվածի 4-րդ մասի **(տե՛ս էջ 8):**

Սակայն Վճռաբեկ դատարանը բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ չի անդրադարձել նշված փաստերին: Ավելին, որոշման «Գործի դատավարական նախապատմությունը և էական փաստերը» բաժնում չի շարադրել այդ փաստերը,

մինչդեռ դրանք էական նշանակության փաստեր էին, քանի որ դրանց վրա էին հիմնված բողոքում բերված փաստարկների զգալի մասը: Վճռաբեկ դատարանը միայն անդրադարձել է Ասլան Ավետիսյանի գործով վճռաբեկ դատարանի որոշմանը հակասելու մասին պաշտպանի փաստարկներին: Իսկ ՀՀ քրեական դատավարության 134-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով ներկայացված պնդումներին հարկ չի համարել իրավական գնահատական տալ՝ թեև այդ հիմքով ներկայացված էին եղել և փաստաթղթեր և փաստարկներ: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը անտեսել է կարևոր իրավաբանական փաստ, որին անդրադառնալու դեպքում կասկածի տակ կհայտնվեր անձին կալանքի տակ պահելու հիմքերի օրինականության հարցը (**հավելված 56**):

**5.4. Վճռաբեկ դատարանը կիրառում է ոչ միայն հայեցողական վերանայման լիազորություն բողոքն ընդունելու կամ չընդունելու հարցում, այլ նաև բացարձակ հայեցողություն, թե բողոքում բարձրացված որ հարցերին պետք է անդրադառնա, և որ հարցերին՝ ոչ:**

Վերը նշված Վարդան Մինասյանի գործով 21/01/2009թ. վճռաբեկ բողոքում, հիմնվելով ՎԲ-132/07 և ԱՎԴ/0022/06/08 նախադեպերի վրա, փաստաբան Լուսինե Սահակյանը բարձրացրել է հետևյալ հարցերը՝ կապված մեղադրյալի կալանքի օրինականության հետ (**հավելված 51**).

1. ապօրինի կալանքի տակ գտնվող անձին անհապաղ ազատ արձակելու մասին որոշում ընդունելու փոխարեն ընտրվել է կալանքը որպես խափանման միջոց,
2. խափանման միջոց կալանավորումը ընտրվել է դրա համար օրենքով չսահմանված որոշման շրջանակներում,
3. որոշումը կայացվել է ոչ թե դատարանի, այլ դրա իրավասությունը չունեցող դատավորի կողմից,
4. դատարանները պատշաճ կարգով չեն քննել հանցագործություն կատարելու հիմնավոր կասկածի մասին հարցը,
5. դատարանները կալանքի անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը չեն հիմնավորել գործով ձեռք բերված փաստերով, կոնկրետ և վերաբերելի ապացույցներով,
6. դատարանները կալանքի անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը հիմնավորել են ընդհանուր և շարժանիքի բնույթի արտահայտություններով,
7. վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ կալանավորման անհրաժեշտության հարցը քննարկելու, այդ մասին որոշում կայացնելու ընթացքում չի ապահովվել կալանավորի և նրա պաշտպանների մասնակցությունը,
8. դատարանների կողմից չեն կայացվել պատճառաբանված որոշումներ,
9. դատարանները բոլորովին հաշվի չեն առել մեղադրյալի անձը, նրան բնութագրող հանգամանքները և այլն:

Իր որոշման մեջ (**տե՛ս հավելված 51**) բոլորովին անհասկանալի պատճառներով Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել բողոքում բարձրացված մի շարք կարևոր հարցերին, որոնք պետք է որ լուծում ստանային վերը նշված թիվ ԱՎԴ/0022/06/08 և թիվ ՎԲ-132/07 նախադեպերով: Մասնավորապես, իր որոշման մեջ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վերևում շարադրված 1-ին, 2-րդ, 7-րդ և 9-րդ պնդումներին (տե՛ս ՀՅՔԸԴՅ/0106/01/08 որոշման պարբ. 20-27 և պարբ. 28-29), սակայն, չի անդրադարձել հիմնավոր կասկածի, կալանքի անհրաժեշտությունը կոնկրետ և վերաբերելի ապացույցներով և գործի փաստերով հիմնավորելու, ոչ իրավասու դատարանի կողմից որոշում կայացնելու, չպատճառաբանված որոշումներ կայացնելու մասին պնդումներին (վերը շարադրված 3-րդ, 4-րդ 5-րդ, 6-րդ և 8-րդ պնդումները): Մինչդեռ, հաշվի առնելով թիվ ԱՎԴ/0022/06/08 և թիվ ՎԲ-132/07 որոշումների վկայակոչումը վճռաբեկ բողոքում, ինչպես նաև հիմնավոր կասկածի և կալանքի հիմքերի մասին նշված որոշումներով սահմանված նախադեպային ձևակերպումների կարևորությունը ներպետական պրակտիկայի զարգացման վրա, ակնկալվում էր, որ Վճռաբեկ դատարանը պետք է որ առնվազն անդրադառնար բարձրացված հարցերին և քննեի կալանքի օրինականության հետ կապված հիմքերով բերված պնդումները: Եթե Վճռաբեկ դատարանը պատճառաբաներ, թե ինչու է նախընտրել չանդրադառնալ բարձրացված հարցերին, ապա այդ որոշումը սույն ուսումնասիրության առարկա չէր դառնալ: Սակայն, եթե չի անդրադարձել և ոչ մի պատճառաբանություն այդ մասին չի ներկայացրել, նշանակում է, որ Վճռաբեկ դատարանն ունի ոչ միայն հայեցողական վերանայման լիազորություն բողոքն ընդունելու կամ չընդունելու հարցերում, այլ նաև բացարձակ հայեցողություն, թե ընդունված բողոքում բարձրացված որ հարցերին պետք է անդրադառնա, և որ հարցերին` ոչ:

### **5.5. «Անհրաժեշտ ջանասիրության» չափորոշիչին չանդրադառնալը**

Հակասություն է առկա նաև Վճռաբեկ դատարանի 14/08/2009թ. Ալեքսանդր Լաչինյանի ԵԱԲԴ/0238/06/08 գործով Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման (**հավելված 52**) և Ասլան Ավետիսյանի գործով վերևում վկայակոչված թիվ ԱՎԴ/0022/06/08 նախադեպային որոշման միջև: Լաչինյանի գործով վճռաբեկ բողոքի մեջ փաստաբանը, հիմնվելով Ասլան Ավետիսյանի գործով սահմանված չափանիշների վրա, վիճարկել է Վերաքննիչ դատարանի հետևյալ հիմնավորումը խափանման միջոց կալանքի երկարաձգման համար.

*«Եփրեմ Ալեքսանդրի Լաչինյանը կատարել է ծանր հանցագործություն, դեռևս չեն վերացել հիմքերը, որ վերջինս կխոչընդոտի և կխուսափի քննությունից, անօրինական ազդեցություն կունենա գործով տուժողների և վկաների նկատմամբ, բացի այդ անհրաժեշտ է փոփոխել Ե. Լաչինյանին նախկինում առաջադրված մեղադրանքը և նրան մեղադրանք առաջադրել, քրեական գործի նյութերին ծանոթացնել դատավարության մասնակիցներին և կատարել քրեական գործով այլ դատավարական գործողություններ, այդ թվում կազմել մեղադրական եզրակացություն, մինչդեռ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ պետք է ուղարկվի համայնքների դատախազություն անձի կալանքի ժամկետի ավարտից առնվազն 10 օր առաջ..»:*

(էջ 7, պարբ. 2)

Փաստաբանը գտնում էր, որ նման հիմնավորման հիմքում ոչ միայն ընկած չեն կոնկրետ և վերաբերելի փաստեր և ապացույցներ այն մասին, որը մեղադրյալը կդիմեր փախուստի, կխոչընդոտեր քննության ընթացքին կամ կկատարեր նոր հանցագործություններ ՀՀ քր. դատ.օր-ի 135-րդ հոդվածի հիմքերով, այլ նաև, որ քննիչը բավարար չափով չի հիմնավորել մինչդատական վարույթն իրականացնող մարմինների «պատշաճ ջանասիրությունը»: Մասնավորապես, չէր հիմնավորվել, թե ինչ «այլ դատավարական գործողություններ» էին անհրաժեշտ կատարել վարույթը եզրափակելու համար: Ավելին, այնպիսի հիմքեր, ինչպիսին են «մեղադրանքը փոփոխելը», «նոր մեղադրանքի առաջադրումը», «դատավարության մասնակիցներին քրեական գործի նյութերին ծանոթացնելը», «քրեական գործով այլ դատավարական գործողություններ կատարելը», «մեղադրական եզրակացություն կազմելը», «քրեական գործը մեղադրական եզրակացությամբ համայնքների դատախազություն ուղարկելը կալանքի ժամկետից առնվազն 10 օր առաջ» չեն կարող կալանքը երկարաձգելու հիմք հանդիսանալ, քանի որ այդ գործողությունները քննիչի պարտականություններն են, այլ ոչ թե կալանքի տակ պահելու հիմք: Այսինքն, փաստաբանը հիմնվել էր Ասլան Ավետիսյանի գործով հայտնի որոշման 26-րդ կետով սահմանված «կալանքի տակ պահելու ժամկետի երկարաձգման համար անհրաժեշտ երկու պայմանների միաժամանակյա առկայության» հայտնի չափանիշի վրա և պնդել, որ երկու պայմաններից ոչ մեկն էլ պահպանված չեն եղել կալանքը երկարաձգելու մասին որոշում կայացնելիս:

Բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ (**հավելված 59**) Վճռաբեկ դատարանն անդրադարձել է միայն առաջին պայմանին, սակայն չի անդրադարձել «անհրաժեշտ ջանասիրությանը»՝ երկրորդ պայմանին, մինչդեռ նախադեպային որոշման մեջ նշվում է այս երկու պայմանների միաժամանակյա առկայության մասին: Այսպես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի է առել փախուստի դիմելու հավանականությունը և դա հիմնավորել է մեղադրյալի անձնական հատկանիշներով և նրա կողմից անցյալում դրսևորած վարքագծով՝ նույնաբովանդակ արարքի համար նախկինում մեկ անգամ դատապարտված լինելու և մեկ անգամ էլ քրեական պատասխանատվության ենթարկվելու հանգամանքները: Անկասկած է, որ նշված հանգամանքները հիմք են անձի փախուստի դիմելու հնարավորությունը գնահատելու համար, թեև անհրաժեշտ է նաև նշել, որ ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, նախկինում դատված լինելու հանգամանքը ինքնին չի կարող կալանքը երկարաձգելու հիմք հանդիսանալ. Ինչպես, մենք նպատակ չենք հետապնդում գնահատել, թե արդյոք դատարանը ճիշտ է գնահատել փաստերն ու ապացույցները: Դա այս ծրագրի նպատակը չէ, բացի այդ, գտնում ենք, որ նման մոտեցումը սխալ է: Այդուհանդերձ, ցանկանում ենք փաստել, որ դիմումը հետ վերադարձնելու որոշման մեջ Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել «անհրաժեշտ ջանասիրության» չափորոշիչի ներքո բողոքաբերի բերած փաստարկներին: Իսկ բողոքաբերը պնդում էր, որ քննիչը չի դրսևորել անհրաժեշտ ջանասիրություն վարույթն իրականացնելիս, քանի որ «*մեղադրանքը փոփոխելը*», «*նոր մեղադրանքի առաջադրումը*», «*դատավարության մասնակիցներին քրեական գործի նյութերին ծանոթացնելը*», «*քրեական գործով այլ դատավարական*

գործողություններ կատարելը», «մեղադրական եզրակացություն կազմելը», «քրեական գործը մեղադրական եզրակացությամբ համայնքների դատախազություն ուղարկելը կալանքի ժամկետից առնվազն 10 օր առաջ» չեն կարող կալանքը երկարաձգելու հիմք հանդիսանալ, քանի որ այդ գործողությունները քննիչի պարտականություններն են, այլ ոչ թե կալանքի տակ պահելու հիմք: Եթե Վճռաբեկ դատարանն անդրադառնար այդ չափորոշիչին, ապա դա կարող էր հետևանք առաջացնել և հիմք հանդիսանալ գործով այլ որոշում կայացնելու համար: Տվյալ դեպքում մենք տեսնում ենք, որ Վճռաբեկ դատարանը շեղվել է իր նախադեպային իրավունքից, որը որպես այդպիսին խնդրահարույց չէ, եթե դատարանը պատճառաբանում է, թե ինչու է հեռացել նախադեպից: Սակայն, եթե շեղման համար ոչ մի պատճառաբանություն չի ներկայացվում և դա կատարվում է լռությամբ, դա նշանակում է, որ ընդունվել է հակասական որոշում:

#### **5.6. Կալանքի օրինականության դատական ստուգման ժամկետների մասին հակասական որոշումները**

2008թ. նոյեմբերի 28-ին թիվ ԵԿԴ/0225/06/08 որոշման մեջ (**հավելված 60**) Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել իբրև ընդլայնված էական դատավարական իրավունքի խախտում, երբ կալանքի օրինականության դատական ստուգում կատարելիս հնարավորինս չի արագացրել կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելու գործընթացը: Այդ որոշման փաստացի հիմքերն հետևյալն են. բողոքը վերաքննիչ դատարանում մուտք է եղել 13.06.2008թ.-ին՝ ուրբաթ օրը և մակագրվել է դատավորին երկուշաբթի օրը՝ 16.06.2008թ.-ին: Գործով նախագահողը առաջին աստիճանի դատարանից նյութերը պահանջել է 18.06.2008թ.-ին՝ չնայած դրանք անհապաղ պահանջելու օրենքի պահանջին: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանից նյութերն ուղարկվել են 24.06.2008թ.-ին և հաջորդ օրը մուտք էղել վերաքննիչ դատարանում: 26.06.2008թ.-ին դատավորը որոշում է կայացրել կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ նյութերը վերաքննիչ դատարանի վարույթ ընդունելու և դատական ստուգման նշանակելու մասին՝ դատական նիստը նշանակելով 2008թ. հունիսի 30-ի երկուշաբթի օրը: Սակայն 2008 թվականի հունիսի 30-ին նշանակված դատական նիստը տեղի չի ունեցել, քանի որ այդ օրը ՀՀ կառավարության որոշմամբ համարվել է ոչ աշխատանքային օր (**պարբ. 26-27**):

Վերը նշված փաստերի հիմքով Վճռաբեկ դատարանը որոշել է, առաջին, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը խախտել է կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը անհապաղ պահանջելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված պահանջը (բողոքը վերաքննիչ դատարան մուտք է եղել 13.06.2008թ.-ին՝ ուրբաթ օրը և մակագրվել է դատավորին երկուշաբթի օրը՝ 16.06.2008թ.-ին: Գործով նախագահողը առաջին աստիճանի դատարանից նյութերը պահանջել է 18.06.2008թ.-ին: Այսպիսով, պետք է արձանագրել, որ կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը վերաքննիչ դատարանի կողմից առաջին աստիճանի դատարանից 2 օր ուշացումով

պահանջելը համարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված «անհապաղ» հասկացության խախտում:

Երկրորդ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանը պետք է անհրաժեշտ ջանք գործադրեր պահանջված նյութերը հնարավորինս արագ ստանալու համար: Տվյալ դեպքում նյութերը պահանջվել են 18/06/2008թ.-ին, իսկ ստացվել են 25/06/2008թ.-ին: Այսինքն, Վճռաբեկ դատարանը պոզիտիվ պարտականություն է սահմանել Վերաքննիչ դատարանի վրա, որպեսզի վերջինս ոչ թե չեզոք դիրքում սպասի նյութերի ստացմանը առաջին ատյանի դատարանից, այլ «ջանքեր գործադրի» այդ նյութերն արագորեն ստանալու նպատակով: Նյութերի 7 օրում ստանալու հանգամանքը Վճռաբեկ դատարանի կողմից դիտվել է որպես անհրաժեշտ ջանքեր չգործադրելու արդյունք:

Երրորդ, Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը 2008թ. հունիսի 25-ին ստացված լինելու պայմաններում դատական ստուգումը իրականացնել անմիջապես հաջորդ օրերի ընթացքում՝ հունիսի 26-ին կամ 27-ին՝ մանավանդ որ բողոքը ստացվել էր տասներկու օր առաջ, մինչդեռ տվյալ դեպքում նիստը նշանակվել էր 5 օր հետո, որն էլ իր հերթին հետաձգվել էր: Նման հապաղումը նույնպես համարվել է «անհրաժեշտ ջանասիրության» սկզբունքի խախտում (որն, ըստ Եվրոպական դատարանի, դատաքննության ողջամիտ ժամկետը գնահատելու չափանիշ է):

Վերը նշված խախտումները Վճռաբեկ դատարանը կողմից համարվել են դատավարական իրավունքի էական խախտումներ (**էջ 10, պարբ. 27**):

2009թ. հուլիսի 08-ին ներկայացված Եփրեմ Լաչինյանի գործով վճռաբեկ բողոքում (որը վկայակոչվել է վերևում՝ **հավելված 58**), բողոքարկուն վիճարկում էր նույնանման հանգամանքներ: Մասնավորապես՝ բողոքաբերը պնդում էր, որ վերաքննիչ դատարանը թիվ 14803008 քրեական գործի նյութերը առաջին ատյանի դատարանից և ոստիկանությունից պահանջել է հունիսի 10-ին, դրանք դատարանից ստացել է 17/06/2009թ.-ին, իսկ նիստ նշանակել է 23/06/2009թ.-ին, սակայն նշված օրը դատախազի չներկայանալու պատճառով դատավորը, անտեսելով Քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որը նախատեսում է, որ «բողոքը քննելու օրվա մասին նախապես իրազեկ կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն», օգնականի միջոցով նիստը հետաձգել և նշանակել է 25/06/2009թ.-ին: Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պնդում էր, որ վերաքննիչ դատարանը խախտել է օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված երեք օրյա ժամկետը, այսինքն վիճարկվող դատական ակտի ստուգումը անցկացրել է օրենքով նախատեսված ժամկետից հինգ օր անց՝ առաջին նիստը նշանակել է գործի նյութերը ստանալուց հետո 6 օր անց, այնուհետև առանց հիմնավոր պատճառաբանությունների հետաձգել և նշանակել է 25/06/2009թ.-ին:

2009թ. օգոստոսի 14-ին Վճռաբեկ դատարանը մերժել է բողոքը՝ գտնելով, որ դատավարական իրավունքի խախտումներ թույլ չեն տրվել (վկայակոչված վերևում՝ հավելված 59): Փաստորեն, դատարանը գտել է, որ նյութերի 7 օրում ստանալու հանգամանքը դատավարական իրավունքի խախտում չէ՝ դրանով իսկ հակասելով թիվ ԵԿԴ/0225/06/08 որոշմանը, որում 7 օրը համարել էր քրեադատավարական իրավունքի էական խախտում: Ավելին, նյութերը ստացված լինելու պայմաններում 6 օր հետո դատական նիստ նշանակելը նույնպես չի համարվել դատավարական իրավունքի խախտում, մինչդեռ նույն ԵԿԴ/0225/06/08 որոշման մեջ 5 օր հետո նիստ նշանակելը համարել է դատավարական իրավունքի էական խախտում: Նման հանգամանքներում Վճռաբեկ դատարանն ընդհանրապես չի անդրադարձել «անհրաժեշտ ջանասիրության» չափանիշին, մինչդեռ ակնկալվում էր, որ թիվ ԵԿԴ/0225/06/08 նախադեպի հիմքով հենց այս չափանիշի ներքո պետք է գնահատվեին փաստերը՝ այդ թվում նաև, թե արդյոք վերաքննիչ դատարանը կարող էր, պատշաճ ջանասիրություն դրսևորելու դեպքում, նյութերը ստանալուց հետո ավելի շուտ նշանակել դատական նիստը: Ճիշտ է, կային հանգամանքներ, որոնք կարող էին պատճառ հանդիսանալ նիստը ուշացումով նշանակելու համար, օրինակ. քրեական գործը Երևանի քննչական վարչություն ուղարկված լինելը, Երևան քաղաքի դատախազությանը և քննչական վարչությանը նույնպես ծանուցելու անհրաժեշտությունը, հունիսի 23-ի դատական նիստին դատախազի և քննիչի բացակայությունը, սակայն պետք է նկատի ունենալ, որ «անհրաժեշտ ջանասիրության» չափորոշիչը ԵԿԴ/0225/06/08 նախադեպում կիրառելով Վճռաբեկ դատարանը նպատակ է հետապնդել այդպիսով ներմուծել բախվող շահերի միջև անհրաժեշտ հավասարակշռություն սահմանելու ինստիտուտը: Տվյալ դեպքում բախվող էին մի կողմից անձի ազատության և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը, իսկ մյուս կողմից մրցակցային դատական քննության շահը: Չկիրառելով «պատշաճ ջանասիրության» չափորոշիչը, Վճռաբեկ դատարանը, փաստորեն, հեռացել է իր նախադեպային իրավունքից, որի արդյունքում առաջացել են հակասություններ երկու տարբեր գործերով միանման ժամկետները մի դեպքում քրեադատավարական իրավունքի էական խախտում համարելով, իսկ մյուս դեպքում՝ խախտում չհամարելով:

### **5.7. Վճռաբեկ դատարանը շրջանցել է իրավունքի մասին բարձրացված հարցը**

Փաստաբան Ինեսա Պետրոսյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք հետևյալ փաստերի հիմքով (տե՛ս **հավելված 61**): Փախուստի մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ որոշվել է կիրառել խափանման միջոց կալանք 2 ամիս ժամկետով: Հայտնաբերվելուց հետո նա չի տարվել դատավորի մոտ և, փաստորեն, անօրինական կերպով գտնվել է անազատության մեջ: Պաշտպանական կողմը ներկայացրել է միջնորդություն վարույթն իրականացնող քննիչին մեղադրյալին անհապաղ ազատ արձակելու վերաբերյալ, քանի որ վերջինս գտնվում էր անօրինական անազատության մեջ: Քննիչը պատասխանել է, որ միջնորդությամբ դիմել է դատարան խափանման միջոցի ժամկետը երկու ամսով երկարաձգելու համար և որ դատարանի վերջնական որոշմամբ կլուծվի խափանման միջոցն անփոփոխ թողնելու կամ վերացնելու մասին հարցը: Առաջին ատյանի դատարանը բավարարել է քննիչի միջնորդությունը և որոշել է կալանքի ժամկետը երկարաձգել երկու ամսով:

Միաժամանակ դատարանը կայացրել է լրացուցիչ որոշում, որով քննչական վարչության պետի ուշադրությունն է հրավիրել քննիչի կողմից թույլ տված խախտման վրա: Պաշտպանը որոշումը բողոքարկել է վերաքննիչ դատարան, որում վկայակոչել է Վճռաբեկ դատարանի 2008թ. դեկտեմբերի 26-ի թիվ ԼԴ/0197 որոշումը Վահրադյանի գործով (**հավելված 62**): Վերաքննիչ բողոքը մերժվել է: Որոշման մեջ վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերը նշված նախադեպին և դրա հիմքով բերված փաստարկներին: Ներկայացրած վճռաբեկ բողոքում պաշտպանը բարձրացրել է կալանքի օրինականության հետ կապված մի շարք հարցեր, այդ թվում նաև, որ վերաքննիչ դատարանը չի անդրադարձել իր կողմից վկայակոչված նախադեպային որոշմանը և այդ հիմքով բերված փաստարկներին: Այնուհետև, պաշտպանական կողմը հստակորեն ձևակերպել է իրավունքի մասին հարցը հետևյալ կերպ.

*«Պաշտպանական կողմը հարց է բարձրացնում. դատարանի կողմից լրացուցիչ որոշման կայացման և առկայության պայմաններում վերանում է արդյոք անձի անօրինական կալանավորման հարցը»:*

**(հավելված 61, էջ 3, ( պարբ. 5)**

Բողոքը վերադարձնելու որոշման մեջ (**հավելված 63**) Վճռաբեկ դատարանը իրավունքի մասին հարցը շարադրել է հետևյալ կերպ.

*«Բողոքաբերը նաև նշում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքում բերված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Տիգրան Վահրադյանի վերաբերյալ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի նախադեպային որոշումը կիրառելու վերաբերյալ փաստարկին»:*

**(էջ 3, պարբ. 1):**

Այնուհետև դատարանը շարադրել է իր եզրահանգումներն այն մասին, որ իրականում առաջին ատյանի դատարանը անդրադարձել է վկայակոչված նախադեպին իր կողմից կայացրած լրացուցիչ որոշման մեջ և լրացուցիչ որոշմամբ ՀՀ ԿԱ ՊԵԴ քննչական վարչության պետի ուշադրությունն է հրավիրել քննիչի կողմից թույլ տված խախտման վրա: Այսքանով Վճռաբեկ դատարանը եզրափակել է իր եզրահանգումը:

Անհրաժեշտ է նկատել, որ նախադեպին չանդրադառնալը պաշտպանի կողմից բերված օժանդակ բնույթի փաստարկ էր, որը բխում էր իրավունքի մասին բարձրացված հիմնական հարցից այն մասին, թե արդյոք լրացուցիչ որոշմամբ վերացել է անօրինական կալանքի փաստը կամ, այլ կերպ ասած, արդյոք լրացուցիչ որոշումը խախտումը վերականգնելու արդյունավետ միջոց էր: Ակնկալվում էր, որ Վճռաբեկ դատարանը հենց այլ լույսի ներքո պետք է որ քննության առնեք բարձրացված հարցը: Մինչդեռ, դատարանը նպատակահարմար չի համարել անդրադառնալ այդ հիմնարար հարցին, այլ նախընտրել է միայն արձանագրել այն փաստը, որ վկայակոչված նախադեպը քննության առնվել է: Ավելին, Վճռաբեկ դատարանը չի պատճառաբանել, թե ինչու նպատակահարմար չի համարել խնդիրը քննել պաշտպանի կողմից բարձրացված հարցի լույսի ներքո:

Նույնիսկ եթե ընդունենք, որ արձանագրելով լրացուցիչ որոշման մեջ Վահրադյանի գործով նախադեպին անդրադառնալու փաստը, Վճռաբեկ դատարանն անուղղակիորեն անդրադարձել է պաշտպանի բարձրացրած հարցին, ապա սա ակնհայտորեն բավարար չէ, քանի որ ստեղծվում է հակասություն նման անուղղակի եզրահանգման, Վահրադյանի գործով նախադեպի և օրենսդրական այն նորմի միջև, որը սահմանում է լրացուցիչ որոշման նպատակն ու առարկան: Ինչևէ, մեր խնդիրը չի գնահատել, թե արդյոք դատարանը ճիշտ, թե սխալ է գնահատել այս կամ այն փաստը և այդ պատճառով մենք աշխատում ենք ձեռնպահ մնալ գնահատման դաշտ մտնելու բոլոր հնարավորություններից: Մեր խնդիրն է այս հետազոտության միջոցով բացահայտել դատարանի այն որոշումները, որոնք իրավակիրառ պրակտիկայում ստեղծում են հակասական զարգացումներ:

**5.8. Բողոքաբերը թեև հիշատակել է նախադեպային որոշումը, սակայն չի կատարել համեմատական վերլուծություն, որի պատճառով հնարավորություն չի ընձեռել Վճռաբեկ դատարանին կայացնել պատճառաբանված որոշում: Նման դեպքերում չի կարելի ասել, որ վճռաբեկ դատարանը կայացրել է չպատճառաբանված որոշում բողոքը հետ վերադարձնելիս:**

Շատ հաճախ նկատում ենք, որ վճռաբեկ բողոք ներկայացնելիս փաստաբանները ենթադրյալ խախտման մասին եզրահանգումները կատարում են ավելորդ ընդհանրացումներով: Որպես նման երևույթի դրսևորում գրեթե համատարած բնույթ են կրում այն դեպքերը, երբ վճռաբեկ բողոքում վկայակոչվել է նախադեպային որոշում, սակայն չի հիմնավորվել, համեմատական վերլուծություն չի կատարվել հիմնավորելու համար, որ վկայակոչված գործի փաստերը և իրավունքի մասին հարցերը «նույնանման» են քննվող գործին: Բերենք երկու օրինակ, թեև այդպիսիք բազմաթիվ են:

Սամվել Աբովյանի գործով ներկայացված վճռաբեկ բողոքում (**հավելված 64**) պաշտպանը վկայակոչել է Վճռաբեկ դատարանի որոշումը Տարոն Հակոբյանի գործով (**հավելված 65**), սակայն չի հիմնավորել վկայակոչված գործի փաստերի և/կամ իրավունքի մասին հարցերի նույնանման լինելը քննվող գործի հետ (**հավելված 64, էջ 5, պարբ. 3**): Տվյալ դեպքում պաշտպանը պետք է որ կատարեր համեմատական վերլուծություն (ցանկալի է, որպեսզի դա արվեր Ս. Այվազյանի գործով Վճռաբեկ դատարանի ՎԲ-17/08 (23/05/2008թ.) որոշման հիման վրա) և հիմնավորեր, որ վկայակոչված գործի փաստերն ու իրավունքի մասին հարցերը նույնանման են, կամ, անհրաժեշտության դեպքում հիմնավորեր, որ վկայակոչված դրույթի առավել ընդհանրական լինելու պատճառով փաստական հանգամանքների ընդհանրությունը կարևոր չէ, և այլն: Բոլոր դեպքերում, նախադեպային որոշման գուտ վկայակոչումը բավարար չէ, քանի որ տպավորություն է ստեղծվում, որ բողոքաբերը ակնկալում է, որ իր փոխարեն դատարանի փորձագետները կամ դատավորները պետք է կատարեն անհրաժեշտ համեմատական վերլուծությունը: Դա է պատճառը, որ Վճռաբեկ դատարանը իրավամբ մերժել է բողոքը՝ գտնելով, որ թեև բողոքաբերը հիշատակել է նախադեպային որոշումը և նույնիսկ մեջբերում կատարել դրանից, սակայն չի կատարել համեմատական վերլուծություն և չի նշել, թե վերանայվող դատական

ակտն ինչով է հակասում վճռաբեկ դատարանի այդ որոշմանը (**հավելված 66, էջ 2, պարբ. 1**):

Նույնը կարելի է ասել վկայակոչված օրենսդրական դրույթների առումով: Վերևում արդեն ներկայացված Լաչինյանի գործով վճռաբեկ բողոքում (**հավելված 58**) բողոքաբերը պնդել է, որ խախտվել է քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասը և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի գ-կետը, քանի որ դատարանը դատական նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ կերպով չի ծանուցել միջնորդություն ներկայացրած անձին՝ մեղադրյալին կամ նրա օրինական պաշտպանին: Սակայն բողոքաբերն այնուհետև չի հիմնավորել, փաստերով կամ եզրահանգումներով, թե ինչու էր կարծում, որ ծանուցում չի եղել կամ որ ծանուցումը պատշաճ կերպով չի եղել (**տե՛ս էջ 4, պարբ. 4**): Վճռաբեկ դատարանն էլ որոշել է, որ բողոքաբերը չի հիմնավորել, թե ինչում են արտահայտվել նշված հոդվածների խախտումը և որ այդպիսիք բացակայում են նաև նյութերում (**հավելված 59, էջ 2, պարբ. 9**):

## Եզրակացություն

Անգլո-Ամերիկյան իրավական համակարգում կիրառվում է պարտադիր նախադեպի սկզբունքը (*Stare Decisis*<sup>6</sup>), որի համաձայն մեկ որոշումը որպես այդպիսին ունի պարտադրող նշանակություն և դատարանները պարտավոր են հետևել այդ որոշմանը նոր գործով որոշում կայացնելիս: Այլ կերպ ասած, մեկ որոշումը հանդիսանում է իրավունքի աղբյուր: Մայրցամաքային (Եվրոպական) իրավական համակարգում պարտադիր նախադեպի սկզբունքը պատմականորեն ստացել է այլ դրսևորում: Նախադեպի իրավունքը այս համակարգում բխում է ոչ թե նախկինում ընդունված մեկ որոշումից, այլ որոշումների հավաքական ամբողջությունից՝ դատական պրակտիկայից: Դատական պրակտիկան վերածվում է իրավունքի աղբյուրի, եթե այն ծավալվելով ձեռք է բերում շարունակականություն, կայունություն և, ի վերջո, վերածվում գերիշխող նախադեպերի ամբողջության: Դատարանները դրանց վերաբերվում են որպես իրավունքի «փափուկ» աղբյուրի: Դատարանները պարտադրված չեն նախադեպային որոշումներով, սակայն պարտավոր են հաշվի առնել դրանք նոր որոշում կայացնելիս: Որքան բարձր է դատական պրակտիկայի կայունության աստիճանը, այնքան ավելի մեծ է դրա ազդող նշանակությունը: Այլ կերպ ասած, դատական ավանդույթը վերածվում է դատական նորույթի ոչ թե մեկ վճռի, այլ վճիռների քանակական ամբողջության ազդեցությամբ: Այս տեսությունը կոչվում է «կայուն հաստատված դատական պրակտիկա» (*jurisprudence constante*): Եթե *Stare Decisis* տեսության նախադեպերն իրենց բնույթով պարտադրող են (*Binding Precedence*), ապա *jurisprudence constante* տեսության նախադեպերը՝ համոզիչ (*persuasive precedence*):<sup>7</sup> Որևէ իրավական խնդիր լուծելիս նախկինում ընդունված որոշումներն, ըստ այս տեսության, օգտագործվում են փաստարկներն ավելի համոզիչ և հիմնավոր դարձնելու նպատակով: Նախկինում ընդունված որոշումները հաշվի են առնվում, եթե դատական պրակտիկայուն դրանք ձեռք են բերում անհրաժեշտ կայունություն և շարունակականություն: Որքան շատ է նախկինում ընդունված որոշումների քանակը, կայունությունը և միատեսակությունը, այնքան ավելի ազդող և համոզիչ նախադեպային նշանակություն է ձեռք բերում դրանց ազդեցության տակ ընդունված նոր որոշումը:

Հետազոտությունից կարել է եզրակացնել, որ որոշ ոլորտների առնչությամբ Վճռաբեկ դատարանի պրակտիկան սկզբունքորեն զարգանում է պարտադիր նախադեպային իրավունքի (*Stare Decisis*) համաձայն՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով. մեկ որոշումը դառնում է իրավունքի աղբյուր, որին կանոնավոր կերպով հետևում է Վճռաբեկ դատարանը և ստորադաս աստիճանները: Իսկ որոշ ոլորտների առնչությամբ էլ պրակտիկան զարգանում է կայուն հաստատված դատական պրակտիկա սկզբունքի (*jurisprudence constante*) համաձայն. մեկ որոշումը դեռ չի ապահովում դատական

<sup>6</sup> *Stare Decisis* – .Թող որոշումը մնա անփոփոխել: Նախադեպի իրավունքե տեսության լատիներեն անվանումը: .

<sup>7</sup> .Համոզիչե բառն այստեղ օգտագործվում է տերմինի բառացի թարգմանությամբ: Ընդունված է նաև օգտագործել .ազդող նախադեպե կամ .ուղղորդող նախադեպե արտահայտությունը, որի մասին կխոսվի ներքևում:

նորույթի պարտադիր կիրառությունը Վճռաբեկ դատարանի և ստորադաս ատյանների կողմից, սակայն նկատվում է միասնական պրակտիկայի անցնելու, շարունակականություն ապահովելու միտում և այդպիսով մեկ որոշումը ձեռք է բերում ոչ թե պարտադիր նախադեպի, այլ ուղղորդող նախադեպի նշանակություն:

ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը հստակ մատնանշում է, որ Վճռաբեկ դատարանի որոշումները հանդիսանում են ոչ թե ուղղորդող, այլ պարտադիր նախադեպեր, ինչը ինքնին ենթադրում է երկու կարևոր հանգամանք՝

1. Վճռաբեկ դատարանը պետք է ինքը հետևի նրան, որպեսզի իրեն ներկայացվելիք բոլոր գործերով առաջ քաշված հարցի լուծումը լինի նույնը, ինչ որ տրված է Վճռաբեկ դատարանի նախկին որոշմամբ՝ ստորադաս դատարաններին շեղվելու հնարավորություն թողնելով միայն այն դեպքերում, երբ դատարանը, ինչպես և պահանջում է վկայակոչված հոդվածը, «ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:
2. Վճռաբեկ դատարանն ինքը պետք է հետևի իր նախկինում կայացված որոշմանը և այս առումով ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը հասցեագրված է նաև Վճռաբեկ դատարանին, հակառակ դեպքում վերջինս ինքը կդառնա «իրավական անորոշության աղբյուր», ինչպես նշել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը *Բեյանն ընդդեմ Ռումինիայի* գործով (*տես՝ Բեյանն ընդդեմ Ռումինիայի գործով ՄԻԵԴ վճիռը (h-1), Հ-30658/05, 6 դեկտեմբերի, 2007թ., կետ 39-րդ; Beian v. Romania (no. 1), no. 30658/05, 6 December 2007, ք 39-րդ*): Այդ գործով Դատարանը ուսումնասիրել է Ռումինիայի Գերագույն դատարանի որոշումների հակասականության հարցը, և նշել, որ հակասություններն արդյունք են «հանդիսանում ներպետական բարձրագույն դատարանում պրակտիկայի կայունության ապահովման մեխանիզմների բացակայության», և ընդգծել գերագույն դատարանների առաքելությունը դատական որոշումների հակասությունները վերացնելու ուղղությամբ.

*«36. Իր պրակտիկայի հետևողականությունն ապահովող մեխանիզմի բացակայության պարագայում ներպետական բարձրագույն դատարանը կայացրել է, երբեմն միննույն օրը, տրամազծորեն հակառակ որոշումներ Հ-309-2002 Օրենքի կիրառելիության ոլորտի վերաբերյալ...»*

*37. Իհարկե, դատական պրակտիկայում առկա տարբերությունները ինքնին ուղենշում են իրավական ցանկացած համակարգ, որը հիմնված է վերջինիս տարածքում առկա նյութական իրավունքի հարցերով լիազորված տարբեր իրավասությունների ամբողջության վրա: Սակայն, գերագույն դատարանի դերը հենց կայանում է նրանում, որպեսզի վերացնի այդ հակասությունները (Զելինսկին և Պրադալը և Գոնզալեսը և ուրիշներն ընդդեմ Ֆրանսիայի {ՄՊ}, Հ-24846/94 և 34165/96, կետ 59-րդ,*

ՄԻԵԴ 1999, h-VII; *Zelinski and Pradal and Gonzalez and Others v. France* [GC], No.24846/94 and 34165/96, գ 59, ECHR 1999-VII):

38. Սակայն, պետք է նշել, որ այս դեպքում Վճռաբեկ բարձր դատարանը ինքն է հանդիսանում այն խորը և կայուն տարբերությունների աղբյուրը, որոնք մատնանշվել են բողոքաբերի կողմից»:

39. Երկրի բարձրագույն դատական աստիճանի կողմից ձևավորված այս պրակտիկան ինքնին հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, որը ենթադրվում է Կոնվենցիայի բոլոր հոդվածներում և հանդիսանում «իրավունքի գերակայության» հիմնարար բաղադրիչներից մեկը (տես, *mutatis mutandis` Բարանովսկին ընդդեմ Լեհաստանի*, Հ-28358/95, կետ 56-րդ, ՄԻԵԴ 2000, h-III; *Baranowski v. Poland*, No. 28358/95, գ 56, ECHR 2000 III): Փոխանակ դիմողի պնդմամբ հետևելուն ենթակա մեկնաբանությունն ամրապնդելու Վճռաբեկ բարձր դատարանը ինքն է դարձել իրավական անորոշության աղբյուր<sup>8</sup>, այդպիսով խաթարելով հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ (տես, *mutatis mutandis` Սովտրանսավտո Հոլդինգն ընդդեմ Ուկրաինայի*, Հ-48553/99, կետ 97-րդ, ՄԻԵԴ 2002, h-VII ..., Պերես Արիան ընդդեմ Իսպանիայի, Հ-32978/03, կետ 27-րդ, 28 հունիսի, 2007թ.; *Sovtransavto Holding v. Ukraine*, No. 48553/99, գ 97, ECHR 2002 VII ..., *Perez Aria v. Spain*, No. 32978/03, գ 27, June 28, 2007):

40. Դատարանը եզրահանգում է, որ դատական անորոշությունը դիմումատուին զրկել է Հ-309-2002 Օրենքով սահմանված երաշխիքներից օգտվելու որևէ հնարավորությունից, մինչդեռ միննույն իրավիճակում գտնվող այլ մարդկանց այդ իրավունքներն ընձեռնվել են: Հետևաբար, թույլ է տրվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում»:

Վճռաբեկ դատարանը բազմիցս չի անդրադառնում բողոքաբերների այն փաստարկներին, որոնք ուղղված են հիմնավորելու ՎԴ կողմից հաստատված նախադեպերի կիրառման անհրաժեշտությանը, այսինքն՝ փաստական հանգամանքների նմանությանը: Մինչդեռ, ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը սահմանում է, որ «որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»<sup>9</sup>:

<sup>8</sup> Ընդծումները մերն է:

<sup>9</sup> Ընդծումները մերն են:

Արդյունքում, կարևորագույն հարցը, որ մնում չլուծված, դա Վճռաբեկ դատարանի ակտերի, մանավանդ՝ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումների անկանխատեսելիությունն է: Բարձրագույն դատական աստիճանը մերժում է բողոքը վարույթը բողոք ընդունել՝ առանց հիմնավորելու, թե ինչու տվյալ հարցով կայացվելիք դատական ակտը չի կարող էական նշանակություն ունենալ դատական պրակտիկայի միասնականության համար, և ինչու այդ հիմքով ընդունված և ըստ էության լուծված բողոքն ունի այդ էական նշանակությունը: Կամ՝ անկանխատեսելի է, թե որոնք են այն ծանր հետևանքները, որոնք պետք է առաջացնեն պնդվող դատական սխալը, որպեսզի այդ պնդումը պարունակող բողոքը չմերժվի վարույթ ընդունվելուց:

**Կարծում ենք, որ ոչ ոք չի կարող պնդել, որ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածում օգտագործվող «դատարանի համար» եզրույթը տարածվում է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի համար, և որ վերջինիս համար պարտադիր են ինչպես իր, այնպես էլ Եվրոպական դատարանի որոշումները, ներառյալ՝ մեկնաբանությունները «որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով»:**

Այն, որ ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը սահմանում է պարտադիր նախադեպի ինստիտուտը, հաստատվում է ոչ միայն այդ հոդվածի բովանդակությամբ, այլ օրենսգրքի նախագծի պատմությամբ նույնպես: Նախագծի ամբողջական սկզբնական տեքստում, անգամ նախագծի միջազգային փորձաքննություն անցկացնելու համար կատարված անգլերեն թարգմանության տեքստում նշված էր, որ պարտադիր են «վերադաս դատարանների» դատական ակտերը, որի պարագայում Վճռաբեկ դատարանը, իրոք, չունենալով վերադաս դատարան, դուրս կմնար Վճռաբեկ դատարանին նախադեպերին հետևելու պարտականություն կրող սուբյեկտների ցանկից: Այնուհետև, պարտադիր նշանակության դատական ակտեր կայացնելու իրավասությունը օրենքի վերջնական տեքստում վերապահվեց միայն ՀՀ Վճռաբեկ դատարանին, ինչը մյուս կողմից պայմանավորված էր նաև հենց պարտադիր, այլ ոչ թե ուղղորդող նախադեպերի միասնականությունն ապահովելու անհրաժեշտությամբ:

Օրենսգրքի վերջնական տեքստը ավելի համահունչ էր ՀՀ Վճռաբեկ դատարանի սահմանադրական նոր կարգավիճակին: Ենթադրվում էր, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի հենց այդ կարգավիճակի իրացմանն համար անհրաժեշտ գործառնություններն էին և դրանց իրականացման հիմքերը, որ պետք է ամրագրվեին ՀՀ դատավարական օրենսգրքերով:

Սակայն ՀՀ դատավարական օրենսգրքերով ՀՀ Վճռաբեկ դատարանը ստացավ նաև այնպիսի լիազորություններ, որոնք հատուկ են ոչ թե նախադեպային կամ Ընդհանուր իրավունքի, այլ Քաղաքացիական իրավունքի երկրների բարձրագույն դատարաններին: Արդյունքում ՀՀ Վճռաբեկ դատարանը ստացավ այնպիսի լիազորություններ, որոնք առանձին-առանձին չունեն Ընդհանուր և Քաղաքացիական իրավունքի երկրների բարձրագույն դատարանները:

Այս համադրումը բնական չէ ամեն դեպքում երկրի բարձրագույն դատական ատյանի համար, քանի որ դատական համակարգին ներհատուկ միակ գործընթացի՝ դատական ճանաչողության առումով երկու համակարգերն անհամատեղելի են: Նախադեպային համակարգի հիմքում ընկած է դատարանի «ինչ է ասում օրենքը» ասելու իրավունքը և օրենքի մեկնաբանությունը կոնկրետ գործ քննող դատավորի կողմից, ինչպես նաև ներպետական ընթացիկ օրենսդրությունից ավելի բարձր կարգավիճակ ունեցող նորմերը՝ Սահմանադրությունն ու վավերացված միջազգային պայմանագրերը անմիջապես մեկնաբանելու և կիրառելու իրավունքը և պարտականությունը: Այստեղ բնական է, որ ընդհանուր իրավասության դատարանը կարող է կատարել օրենսդրության «էպիգոդիկ վերանայում»: Քաղաքացիական իրավունքի երկրում ունեցած կարգավիճակի դեպքում դատական ճանաչողության հիմքում ընկած է բացահայտված փաստերի նկատմամբ արդեն առկա իրավական նորմը: Վերջինիս մեկնաբանումը տրված է նախօրոք՝ օրենսդրի կողմից օրենքում անհրաժեշտ լրացումներ կատարելիս կամ բարձրագույն դատական ատյանի կողմից, որին վերապահված է օրենքի պարտադիր մեկնաբանման մենաշնորհը: Որպես այդպիսին, այս համակարգերում մի կողմից իրավունքը՝ էությունը, և մյուս կողմից իրավական նորմերը՝ երևույթը, նույնականացված են («իրավունքը «հանդիսանում է» իրավական նորմերի համակցություն»), ինչի հետևանքով բացառվում է պոզիտիվ «օրենքից» բարձր որևէ ակտի կամ իրավական երևույթի գոյությունը, մեկնաբանությունը և կիրառումը:

ՀՀ Վճռաբեկ դատարանի այս երկիմաստ կարգավիճակի բացահայտումը, կարծում ենք, առավել քան կարևոր է դրա պրակտիկան գնահատելու համար: ՀՀ Վճռաբեկ դատարանն, այսպիսով, ձեռք բերեց.

1. իրավունքի կիրառման միասնականությունն ապահովելու համար իրավունքի մեկնաբանման լիազորությունը, որից բխեց.
2. Սահմանադրությունն ու միջազգային պայմանագրերը մեկնաբանելու ու անմիջապես կիրառելու լիազորությունը,<sup>10</sup>
3. քաղաքացիական իրավունքի համակարգի բարձրագույն դատարանին բնորոշ բոլոր գործառնությունները (թերևս՝ բացառությամբ գործերը առաջին ատյանի դատարանի կարգով քննելու լիազորության):

Արդյունքում, ՀՀ Վճռաբեկ դատարանը հանդես է գալիս որպես նախադեպային իրավունք ստեղծող բարձրագույն ատյան իրեն ներկայացված բողոքների ընդունելիության հարցը որոշելիս, և որպես քաղաքացիական իրավունքի համակարգի բարձրագույն դատարան՝ իր իսկ կողմից ընդունելի ճանաչված

<sup>10</sup> Ընդ որում ՀՀ դատական օրենսգրքի ուժով այդ մեկնաբանությունները պարտադիր են բոլոր մյուս դատարանների համար՝ բացի այն դեպքերից, երբ ծանրակշիռ կերպով այդ դատարանների կողմից հիմնավորվում է, որ իրենց կողմից քննվող փաստական հանգամանքները տարբեր են ՎԴ կողմից քննված գործից, ընդ որում այդ փաստական հանգամանքների նմանությունը կամ տարբերությունը, այսինքն՝ իր սեփական նախորդող մեկնաբանությունների պարտադիր լինելը այս կամ այն հետազայում, անգամ իր իսկ կողմից քննվելիք գործով նույնպես արդյունքում որոշում է ՎԴ-կողմից:

գործերով: Սա չի նպաստում նրան, որ ըստ էության կայացվող ակտերը անխտիր բոլոր դեպքերում նշանակություն ունենան նախադեպային իրավունքի զարգացման գործում: Նախադեպային ավանդական երկրներում բարձրագույն դատական ատյանի կողմից գործը լուծող ցանկացած որոշում ունի հսկայական նշանակություն, այդ որոշմանը սպասում է իրավաբանական ամբողջ համայնքը և հասարակությունը, որոշումն ընդունվելուց հետո դրա հետ չհամաձայնողները ուսումնասիրում են, թե ձայների ինչ համակցությամբ է ընդունվել որոշումը, և եթե դա եղել է մեկ ձայնի տարբերությամբ, ապա աշխատում են, որպեսզի թեկուզ և մեկ նոր դատավորի փոփոխության դեպքում, կախված նոր դատավորի արժեքային համակարգից և նախկինում դատական ակտերի միջոցով արտահայտած դիրքորոշումից, կրկին ներկայացնեն նույն հարցը և ստանան նույն հարցի այն կարգավորումը, այն մեկնաբանությունը, որը նրանք կհսում են:

Վերը նկարագրված հակասական կարգավիճակը անխուսափելիորեն բացասաբար է անդրադառնում ՀՀ Վճռաբեկ դատարանի որպես երկրի բարձրագույն դատական ատյանի պրակտիկայի վրա, առաջանում են մեթոդոլոգիական և պրակտիկ բնույթի անառարկելի հակասություններ, որոնք ընդունակ են ի սպառ վերացնել ՎԴ որոշումների ողջամիտ կանխատեսելիության հնարավորությունը: Արդյունքում, ո՛չ իրավաբանական համայնքը՝ դատախազ, փաստաբան, դատավորներ և այլն, և ո՛չ էլ հասարակությունը չի կարող որևէ ողջամիտ ակնկալիք ունենալ առ այն, թե **ինչու է ընդունվում մեկ բողոքը և մերժվում մյուսը: Սա չի երևում ինչպես բողոքը վերադարձնելու մասին որոշումներից (ինչը նորմալ է նախադեպային իրավունքի երկրներում), այնպես էլ ընդունված բողոքի քննության արդյունքում կայացված դատական ակտից:**

Երբեմն Վճռաբեկ դատարանը ըստ էության կայացվող ակտում նշում է, որ «այս հարցով առկա է դատական պրակտիկայի միասնականության ապահովման խնդիր», ինչը հնարավոր կլինի պատշաճ պատճառաբանություն համարել միայն այն դեպքում, երբ նախօրոք պատճառաբանական-նկարագրական մասում Վճռաբեկ դատարանը ձևակերպեր իրավունքի այն հարցը, որը տարբերությունների տեղիք է տվել, այնուհետև ներկայացներ կողմերի հիմնավորումները, որից հետո կկատարեր սեփական վերլուծությունը, որի արդյունքում էլ արված եզրակացությունը կհանդիսանար պարտադիր նախադեպային դիրքորոշում: Որոշ գործերով էլ, Վճռաբեկ դատարանը բավարարելով ընդունված բողոքը (տես՝ Թիվ ՎԲ-63/07 գործով Վճռաբեկ դատարանի 06.04.2007թ. որոշումը) ոչ «Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը» և ոչ էլ՝ «Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը» բաժնում չի նշում ընդունելիությունը հիմնավորող փաստարկների մասին: Մինչդեռ, ընդունելիության մասին որոշումը, կոնկրետ այդ գործով, ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից կայացվել էր ՀՀ քր. դատ. օր 414.2-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի հիմքով, այն է՝ *«բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»:*

Ամեն դեպքում, պետք է ընտրություն կատարվի՝ արդյոք մենք գնում ենք պարտադիր, թե ուղղորդող նախադեպի իրավական համակարգ ստեղծելու

ճանապարհով: Եթե երկրորդը, ապա պետք է վերանայվի Դատական օրենսգրքի նշված հոդվածը: Սակայն ցանկացած դեպքում անվիճելի մի բան. պարտադիր կամ ուղղորդող նախադեպը ստեղծվում է **իրավունքի** դատարանի կողմից, որին կողմերը ներկայանում են փաստերի առթիվ արդեն իսկ փոխըմբռնման եկած: Փաստերը նշանակություն ունեն այնքանով, որքանով կողմերը դրանցով փորձում են հիմնավորել իրավունքի այն հարցի նույնականությունը կամ տարբերությունը, որն արդեն լուծում է ստացել նախկինում քննված գործերով: Կայացված որոշման տեքստում էլ նախադեպային է ոչ թե բարձրագույն դատական աստիճանի ցանկացած դատողություն, այլ վերը նշված նախադեպային այն դիրքորոշումը, որը որպես եզրահանգում դատարանի կողմից ներկայացվում է նախօրոք ձևակերպված իրավունքի հարցի լուծման տեսքով (*ratio decidendi*): Հենց վերջինս է հանդիսանում պարտադիր նախադեպ բոլոր հետագայում քննվելիք գործերի համար:<sup>11</sup> Այսպիսով, նախադեպային դիրքորոշում չի կարող համարվել պատիժը նվազեցնելը և փաստի հարցի դատարանին բնորոշ մի շարք այլ լիազորություններ:

---

<sup>11</sup> Նման որոշումներ կան նաև Վճռաբեկ դատարանի պրակտիկայում: Այսպես, ՎԲ-251/06 գործով Վճռաբեկ դատարանը նշել է. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ վարույթն իրականացնող մարմինները, այդ թվում նաև դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստը: Նշված հոդվածում խոսք է գնում ոչ միայն դատավարությանը մասնակցող անձանց ազգակցական լինելու, այլ ազգակցական հարաբերությունների մեջ լինելու մասին, որի պայմաններում պաշտպանին և ներկայացուցչին գործով վարույթից հեռացնելու հիմք պետք է հանդիսանա ոչ միայն նրանց կենսաբանական կապը, այլ նաև ազգակցական հարաբերությունները: Այդ առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթը չէր կարող քննարկվել միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 39-րդ կետի իմաստով: Իսկ ազգակցական հարաբերություններն առկա են միայն այն դեպքում, երբ ազգակցական կապը զուգորդվում է ազգակցական հարաբերություններով (մարդկային շփումներ, այդ կապը կարևորող դրսևորումներ և այլն): Տես, նաև, ՀՀ Վճռաբեկ դատարանի 2008թ. հոկտեմբերի 31-ի Ասլան Ավետիսյանի գործով որոշումը (ԱՎԴ/0022/06/08). *„ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված խափանման միջոցի կիրառման հիմքերը չեն կարող այնպես մեկնաբանվել և կիրառվել, որ կալանքի ժամկետը երկարացնելու մասին դատական ակտը պատճառաբանելու համար ընդամենը բավարար լինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված իրավական ձևակերպումների վկայակոչումը կամ վերարտադրումը: Հակառակ պարագայում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական երաշխիքը կլինի պատրանքային, իսկ հիմնական իրավունքը փաստացի կրավանդակազրկվի:*